1339

Պրակ Ա.

Հոսկ. դպրոցի տան կիրքերի

1915

511(076)
Ռ-87

2010

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՒ

ՕՐԻՆԱԿՆԵՐ

4102

ՊՐԱԿ Ա.

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԱՒԱԶԻՆ ՀԱՐԻՒՐԱՑԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մանկապատի դպրոցների աշակերտների

ԳԻՆԸ Է 25 ԿՈՊ.
ԿԱԶՄԱԾ 40 ԿՈՊ.

Փոխադրեց

ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Պահեստը
ՀԻ Ի ԲՅ
գրավաճառանոցում

Հինգերորդ տպագրութիւն

ՓԻՃԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Գրաֆիական վար.
1913

511(076)
Թ-87

Арм.
3-4460/1а
3-4460/1а
511(076
Թ-87

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԵՒ

ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՊՐԱԿ Ա.

ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ ԸՆԴԱՀԻՆ ՀԱՐԻՒՐԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մոսկուայի դպրոցների ուսուցիչների

Գինն է 25 կոպ.

Փոխադրեց

ԱՐ. ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Պահեստը
— ՀԻՐ —
գրավաճառանոցում

Հինգերորդ տպագրութիւն

ԹԻՓԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ», Գրաֆսկայա փող.
1913

Инв. №2193

44932-սհ.

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՌ
им. А. Мясникяна

29484-63

12002

I ԽՆԴԻՐՆԵՐ ԸՈՒՉԻՆ ՏԸՄՆԵԼԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Գ Ո Ւ Մ Ա Ր Ո Ւ Մ Ն

1. Երեխան մի խնձոր ունէր. մայրը նրան տուեց էլի մի խնձոր։ Երեխան քանի խնձոր ունի։

2. Ուսումնարանում ճաշից առաջ երեք դաս կայ, իսկ ճաշից յետոյ՝ երկու դաս։ Օրական քանի դաս կայ ուսումնարանում։

3. Գրիգորը մի տետր ունի, իսկ Սարգիսը երկու տետր նրանից աւելի։ Քանի տետր ունի Սարգիսը։

4. Քոյրը երեք վարդ ունի, իսկ եղբայրը երկու։ Քոյր ու եղբայր միասին քանի՞ վարդ ունին։

5. Սեղանի շուրջը նստած ճաշում էին՝ հայրը, մայրը, երկու որդին և երեք հիւր։ Բոլորը քանի հոգի էին ճաշում։

6. Գիւղացին երեք սպիտակ և երկու սև ոչխար ունէր։ Քանի ոչխար ունէր գիւղացին։

7. Մի սենեակում չորս լուսամուտ կայ, իսկ միւսում՝ երկու։ Քանի լուսամուտ կայ երկու սենեակում։

8. Եղբայրը հինգ տարեկան է, իսկ քոյրը երկու տարով նրանից մեծ է։ Քանի տարեկան է քոյրը։

9. Գիւղացին ունէր երկու ձի, երեք ոչխար և չորս կով։ Քանի գլուխ անասուն ունէր գիւղացին։

10. Մի երեխայ 7 խնձոր քաղեց, իսկ միւսը 3։ Քանի խնձոր քաղեցին երկուսը միասին։

11. Մրգավաճառը մի գրվանքա խնձորն առել էր 5 կոպէկով։ Այդ խնձորը ծախելիս մի գրվանքում աշխատում էր չորս կոպէկ։ Քանի կոպէկով էր ծախում խնձորի գըրվանքան։

12. Գիւղացին ծախեց 3 հաւ, երկու սագ և մի բադ։ Քանի հատ թռչուն ծախեց նա։

13. Տիգրանը գրեց երեք բառ, իսկ Գէորգը նրանից երկու բառ աւելի։ Քանի բառ գրեց Գէորգը։

14. Վարդանը գնեց մի երեք կոպէկանոց տետրակ, տուեց մի սպիտակ փող և յետ ստացաւ 7 կոպէկ։ Քանի կոպէկանոց էր նրա տուած սպիտակ փողը։

15. Քանի օր կ'անի մի շաբաթ և երկու օրը, մի շաբաթ և երեք օրը։

16. Գիւղացի կինը ունի վեց բադ և 2-ով աւելի սագ։ Քանի սագ ունի նա։

17. Եղբայրը 4 տարեկան է, իսկ քոյրը 5 տարով եղբօրից մեծ է։ Քանի տարեկան է քոյրը։

18. Մրգավաճառը իր ունեցած խնձորներից առաջ ծախեց երկուսը, յետոյ էլի 7-ը։ Քանի խնձոր ունէը նա։

19. Մէկ նստարանի վրայ նստած են վեց երեխայ, իսկ միւսի վրայ՝ չորսը։ Քանի հոգի են նստած երկու նստարանի վրայ։

20. Գիւղացին առաջին օրը իր ձիաներին տուեց չորս փութ գարի, իսկ երկրորդ օրը՝ երկու փութ առաջին օրուանից աւելի։ Քանի փութ գարի տուեց նա իր ձիաներին այդ երկու օրը։

21. Արամը 7 տարեկան է, իսկ Տրդատը երեք տարով Արամից մեծ է։ Քանի տարեկան է Տրդատը։

22. Մատիտն արժէ 5 կոպէկ, իսկ գրչակոթը երեք կոպէկով նրանից աւելի։ Քանի կոպէկ արժէ գրչակոթը։

23. Հիւանը ունէը երկու տախտակ. մէկի երկարութիւնը 4 արշ. էր, իսկ միւսը 6 արշինով առաջինից երկար էր։ Քանի արշին էր երկրորդ տախտակի երկարութիւնը։

24. Նախրում 3 ձի կար և ձիաներից 6-ով աւելի կով։ Քանի կով կար նախրում։

Հ Ա Ն Ո Ւ Մ Ն

25. Գիւղացին չորս ձի ունէը. դրանցից երկուսը ծախեց։ Քանիսը մնաց։

26. Գիւղացին եօթը մանէթի գարի ծախեց. այդ փողից չորս մանէթը ծախսեց։ Նրան քանի մանէթ մնաց։

27. Պարտիզպանը ունէը 8 փութ գետնախնձոր, որից 4 փութ ծախեց։ Քանի փութ մնաց իրան։

28. Գրիգորը ունի լինը գրչածայր, որից 6-ը նա տուեց իր եղբօրը։ Քանիսը մնաց իրան։

29. Պետրոսը հինգ որդի ունի, որոնցից երեքը տղայ են։ Քանիսն են աղջիկ։

30. Դուրգէնը վեց տարեկան է։ Նա քանի տարուց յետոյ կը դառնայ տասը տարեկան։

31. Մարգարիտն այժմ 10 տարեկան է, իսկ ուսուցմնարան մտնելիս 7 տարեկան էր։ Նրա ուսուցմնարանում լինելը քանի տարի է։

32. Մանրավաճառն ունէը 9 գրվանքա իւղ. այդ իւղից նա ծախեց 5 գրվանքա։ Քանի գրվանքա մնաց։

33. Գիւղացին իր խրճիթը նորոգելու համար առաւ 10 հատ գերան, որոնցից 6-ը գործածեց։ Քանիսը մնաց։

34. Գիրքն արժէ 10 կոպէկ, իսկ մատիտը 5 կոպէկ նրանից պակաս։ Ինչ արժէ մատիտը։

35. Քոյրը գտաւ 10 հատ սունկ, իսկ եղբայրը 6-ով նրանից պակաս։ Քանի սունկ գտաւ եղբայրը։

36. Տանտիկինը ունէը 9 բադ և դրանցից երեքով պակաս հաւ։ Նա քանի հաւ ունէը։

37. Կալուածատէրն ունէը տասը հատ սպիտակ ո՛չ-

խար և դրանցից չորսով պակաս սև ոչխար։ Քանի հատ սև ոչխար ունէր նա։

38. Գիւղացին մի տեղում հարեց 8 դէզ խոտ, իսկ միւս տեղում՝ 4-ով դրանից պակաս։ Քանի դէզ հարեց միւս տեղում։

39. Եղբայրը 10 տարեկան է, իսկ քոյրը 7 տարեկան։ Ո՞վ է նրանցից մեծ և քանի տարով։

40. Սարգիսն ունէր ութը խնձոր, իսկ Գէորգը 3 խնձոր։ Նրանցից ո՞վ շատ ունի և քանիսո՞վ։

41. Յոհարարն առաւ 7 կոպէկի աղ և վճարեց մի տաս կոպէկանոց սպիտակ փող։ Նա քանի կոպէկ պէտք է յետ ստանայ։

42. Մի գրվանքա ալիւրն արժէ 8 կոպէկ, իսկ մի գրվանքա աղը՝ 6 կոպէկ։ Ո՞րն է էժան և քանի կոպէկով։

43. Երկու աշակերտ միասին ստացան 8 թերթ թուղթ. դրանցից մէկը վերցրեց 3 թերթ։ Միւսը քանի թերթ վերցրեց։

44. Վաճառականը չթի արշինն առել էր 7 կոպէկով, իսկ ինքը ծախում էր արշինը 9 կոպէկով։ Արշինում քանի կոպէկ էր աշխատում նա։

45. Մի ծառի բարձրութիւնը 8 արշին է, իսկ միւսը երեք արշինով նրանից կարճ է։ Ո՞րքան է միւս ծառի բարձրութիւնը։

46. Մրգավաճառը մի հատ կիտրոնն առնում է 5 կոպէկով, իսկ ինքը ծախում է 7 կոպէկով։ Քանի կոպէկ է աշխատում մէջը։

47. Երեխան ուզում էր մի գիրք գնել, որ 8 կոպէկ արժէր, բայց տեսաւ, որ 2 կոպէկ պակասում է իրան։ Նա քանի կոպէկ ունէր։

48. Ծաղոյի գրվանքան արժէ 7 կոպէկ, իսկ խնձորը 2 կոպէկով նրանից էժան է։ Խնձորի գրվանքան ո՞րքան արժէ։

49. Տակառում մի քանի վեդրօ ջուր կար. երբ 4 վեդրօ էլ աւելացրին, այնտեղ դարձաւ 10 վեդրօ։ Առաջ քանի վեդրօ ջուր կար տակառում։

50 Ո՞րքան կը մնայ, եթէ 8-ից պակսեցնելու լինենք 2, 3, 5, 7,

51. Քանիսը պիտի հանենք 10-ից, որ մնայ 1, 3, 5, 6, 9։

52. Քանիսը պիտի պակսեցնենք 10-ից, որ մնացորդում ստացուի 3, 4, 6, 8,

53. Պակսեցրէք 8-ը երեքով, 7-ը չորսով, 9-ը վեցով։

54. Մրգավաճառը իւրաքանչիւր նարինջը գնել էր 8 կոպէկով, իսկ ինքը ծախում էր հատը 6 կոպէկով։ Իւրաքանչիւրի մէջ քանի՞ քան էր վնասում։

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ԵՒ ՀԱՆՈՒՄՆ

55. Քանիսը պէտք է աւելացնենք 9-ին, 8-ին, 6-ին, 4-ին, 2-ին, որ ստանանք 10։

56 Ո՞ր թուին պէտք է աւելացնենք 8-ը, 6-ը, 5-ը, 4-ը, 3-ը, որ ստանանք 10։

57. Քանիսը պէտք է հանեք 10-ից, որ մնացորդ ստանանք 2, 4, 6, 1, 8։

58. Պակսեցրէք՝ 9-ը 4-ով, 5-ը 3-ով, 9-ը 2-ով։

59. Աւելացրէք՝ 4-ին 3։ 5-ին 2։

60. 7-ը քանիսո՞վ է պակաս տասից և քանիսո՞վ մեծ 4-ից։

61. Հայրը իր աղջկան տուեց 5 կոպէկ, իսկ տղին՝ երկու կոպէկ նրանից պակաս։ Նա քանի կոպէկ բաժանեց։

62. Երեխան 10 կոպէկ ունէր. երեք կոպէկով նա տետրակ առաւ, իսկ 4 կոպէկով մատիտ։ Քանի կոպէկ մնաց նրան։

63. Եղբայրը ութ տարեկան է, իսկ քոյրը 3 տարով նրանից փոքր է։ Քանի տարեկան է քոյրը։

64. Մի սենեակում 6 աթոռ կայ, իսկ միւս սենեա-

կում՝ երկու աթոռով պակաս։ Քանի աթոռ կայ երկու սենեակում։

65. Դասարանում առաջին նստարանի վրայ նստած են 5 աշակերտ, իսկ երկրորդի վրայ՝ երկուսով պակաս։ Քանի աշակերտ կայ դասարանում։

66. Գիւղացին 8 կոտ գարի ունէր, որից 4 կոտը նա ցանեց, իսկ երկուսը ծախեց։ Քանի կոտ գարի մնաց նրան։

67. Մի մարգագետնի վրայ 5 դէզ խոտ կայ, իսկ միւսի վրայ՝ 3-ով պակաս։ Քանի դէզ կայ միւս մարգագետնի վրայ։

68. Գիւղացին չորս կով և կովերից 2-ով պակաս ձի ունի։ Նա քանի ձի և կով ունի։

69. Երեխան մի գիրք և մի տետրակ առաւ. գիրքն արժէր 6 կոպէկ, իսկ տետրը 4 կոպէկ նրանից էժան։ Ի՞նչ արժէր տետրը։

70. Եղբայրն արտագրեց 7 երես, իսկ քոյրը՝ 5 երես նրանից պակաս։ Քանի երես արտագրեցին նրանք միասին։

71. Թոկի երկարութիւնը 10 արշին էր. նրանից առաջ կտրեցին 3 արշին, յետոյ էլի 5 արշին։ Քանի արշին մնաց։

72. Մայրը կապեց 7 խուրձ, իսկ աղջիկը 3։ Նրանցից ո՞րն աւելի քիչ խուրձ կապեց և քանիսո՞վ քիչ։

73. Տակառում 10 վեդրօ ջուր կար. այնտեղից հանեցին 5 վեդրօ։ Էլի քանի վեդրօ պիտի ածեն, որ այնտեղ դառնայ 8 վեդրօ։

74. Կողովում 9 խնձոր կար. մի երեխայ հանեց այնտեղից 3 խնձոր, միւսը՝ երկու խնձոր նրանից պակաս, իսկ երրորդը՝ այնքան, ինչքան առաջինն էր վերցրել։ Քանի խնձոր մնաց կողովում։

75. Եղբայրը 7 տարեկան է, իսկ քոյրը չորս տարով փոքր է եղբօրից։ Որքա՞ն կը լինի քրոջ և եղբօր տարիները միասին։

76. Մրգավաճառը 10 հատ խնձոր ունէր. այդ խնձորները նա ծախեց երկու մարդու. վրայ մէկին տուեց 4 խնձոր, իսկ միւսին՝ մնացածը։ Քանի խնձոր ստացաւ միւսը։

77. Գիւղացին երկու կտոր թոկ առաւ. մէկի երկարութիւնն էր 9 արշին, իսկ միւսը 4 արշինով առաջինից կարճ էր։ Ի՞նչքան էր երկար թոկի երկարութիւնը։

78. Պարտիզպանը մի մարգից ժողովեց 3 գրվանքա մորի, իսկ միւս մարգից 4 գրվանքա նրանից աւելի։ Քանի գրվանքա մորի հաւաքեց նա երկու մարգից։

79. Սուրէնը 10 տարեկան է, նրա եղբայր Արամը 4 տարով նրանից փոքր է, իսկ նրա քոյր Մարգարիտը 3 տարով փոքր է Արամից։ Քանի տարեկան է Մարգարիտը։

80. Գիւղացին 10 ոչխար ունէր. մէկին ծախեց 6 հատ, միւսին 4-ով նրանից պակաս, իսկ երրորդին 2 ոչխար։ Քանի ոչխար մնաց իրան։

81. Հեշտաեռը կշռում է 10 գրվանքա, կաթսան չորս գրվանքով թեթև է հեշտաեռից, իսկ մատուցարանը 3 գրվանքով թեթև է կաթսայից։ Քանի գրվանքա է կշռում մատուցարանը։

82. Մանրավաճառն ունէր 10 կիտրոն. մէկին ծախեց 3 հատ, միւսին՝ մի քանի հատ, իսկ երրորդին՝ 4 հատ։ Քանի կիտրոն ծախեց երկրորդին։

83. Երկու աշակերտ պիտի վճռէին 10 խնդիր. նրանցից մէկը վճռեց 3 խնդիր, իսկ միւսը վճռեց երկու խնդիր նրանից պակաս։ Էլի քանի խնդիր մնաց վճռելու։

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

84. Ո՛րքան կըստանանք, եթէ 3-ը կրկնենք 2, 3 անգամ։

85. Բազմապատկեցէք 2-ը 3-ով, 4-ը 2-ով, 2-ը 5-ով, 3-ը 3-ով։

86. Վերցրէք՝ 3-ը, 2-ը 3 անգամ, 2-ը, 3-ը, 4-ը, 5-ը 2 անգամ։

87. Շատացրէք 3-ը 2-ով և ստացած թիւը ևս շատացրէք 2 անգամ։

88. Շատացրէք 2-ը 3 անգամ և ինչ որ կըստանաք, այն էլ շատացրէք չորսով։

86. Մի արշին ժապաւէնը արժէ 3 կոպէկ. ո՞րքան կ՛արժենայ 2 արշինը։

90. Մի սենեակ երեք պատուհան ունի, իսկ միւսը երկու անգամ նրանից աւելի։ Քանի պատուհան ունի միւս սենեակը։

91. Մի տետրակն արժէ 4 կոպէկ։ Ո՞րքան կ՛արժենայ երկուսը։

92. Գիւղացին 4 կով ունի և կովերից երկու անգամ աւելի ձի։ Քանի ձի ունի նա։

93. Մի սաժէնը 3 արշին է։ Քանի արշին է երկու սաժէնը։

94. Երեխան առաւ 2 սպիտակ հաց և իւրաքանչիւրին տուեց 5 կոպէկ։ Նա ո՞րքան փող տուեց երկու հացին։

95. Երեք կին մարգեր էին քաղհան անում. իւրաքանչիւրը նրանցից քաղհան արաւ 3 մարգ։ Քանի մարգ քաղհան արին նրանք։

96. Քոյրը երեք տարեկան է, իսկ եղբայրը 3 անգամ քրոջից մեծ է։ Քանի տարեկան է եղբայրը։

97. Մի մարդ 2 կով ունի և կովերից 5 անգամ աւելի ոչխար։ Նա քանի ոչխար ունի։

98. Գիւղացին մի մարգագետնում հարեց 2 դէզ խոտ, իսկ միւսում՝ չորս անգամ աւելի։ Նա քանի դէզ խոտ հարեց երկրորդ մարգագետնում։

99. Երեխան 3 թերթ սպիտակ թուղթ ունէր և 3 անգամ դրանից աւելի մոխրագոյն թուղթ։ Քանի թերթ մոխրագոյն թուղթ ունէր նա։

100. Աղի դրվանքան արժէ 2 կոպէկ։ Ո՞րքան պիտի վճարել 5 դրվանքա աղին։

101. Բանուորը ամսէնն ստանում է 4 մանէթ։ Քանի մանէթ կը ստանայ երկու ամսում։

102. Մի սայլ փայտն արժէ 5 մանէթ։ Ո՞րքան պիտի վճարել 2 սայլ փայտին։

103. Գինեվաճառն ունէր 5 փոքրիկ տակառ գինի՝ իւրաքանչիւրում 2 վեդրօ։ Քանի վեդրօ գինի ունէր նա։

104. Մի շիշը տանում է երկու բաժակ կաթ։ Քանի բաժակ կաթ կը մտնի 2, 3, 4, 5 շշում։

105. Մարդը օրական կ՛ուտի 2 գրվանքա հաց. Նա քանի գրվանքա հաց կ՛ուտի 2, 3, 4, 5 օրում։

106. Տանտիկինը գնեց 4 զոյգ սագ։ Քանի հատ սագ գնեց նա։

107. Մի կառապան 4 զոյգ ձի ունէր, իսկ միւսը 3 երրեակ։ Քանի ձի ունէր նրանցից ամեն մէկը։

108. Իմ ունեցած փողի կէսը 4 մանէթ է։ Քանի մանէթ ունիմ ես։

109. Իմ գրքերի երրորդ մասը անում է 3։ Քանի գիրք ունիմ ես։

Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ն

110. Ո՞ր թիւը պէտք է քչացնենք 2 անգամ, որ ստանանք 3, 4, 5։

111. 3-ը, 6-ը, 9-ը պակսեցրէք 3 անգամ։

112. 10-ը, 8-ը, 6-ը, 4-ը պակսեցրէք 2 անգամ։

113. Բաժանեցէք 10-ը 5-ի, 8-ը 4-ի, 6-ը 3-ի, 8-ը 2-ի վրայ։

114. Շատացրէք 4-ը երկու անգամ և ստացած թիւը պակսեցրէք 5 անգամ։

115. Գտէք 10-ի, 8-ի, 6-ի կէսը։

116. Գտէք 9-ի, 6-ի, 3-ի երրորդ մասը։

117. Ո՞րքան կը լինի 8-ի, 4-ի չորրորդ մասը։

118. 9-ից քանի անգամ կարելի է հանել 3-ը։

119. Եթէ տասը խնձորը հաւասարապէս բաժանենք 2 հոգու մէջ, որքա՞ն կըստանայ ամեն մէկը։

120. Գարեգինն ունի 8 կոպէկ, իսկ նրա եղբայրը 4 անգամ նրանից պակաս ունի։ Քանի կոպէկ ունի եղբայրը։

121. Եղբայրն ունէր 10 խնձոր, որի կէսը տուեց իր քրոջը։ Քանի խնձոր ստացաւ քոյրը։

122. Մայրը կէս դիւժին տանձ բաժանեց հաւասարապէս իր երեք զաւակների մէջ։ Քանի տանձ ստացաւ նրանցից ամեն մէկը։

123. Երեխան առաւ 3 բլիթ և տուեց 6 կոպէկ. ո՞րքան կ'արժենայ 4 այդպիսի բլիթը։

124. Քանի օր բաւական կը լինի 10 կոպէկը, եթէ օրէնը ծախսենք 2 կոպէկ, 5 կոպէկ։

125։ Սաժէնը 7 ոտնաչափ ունի. մի ոտնաչափը սաժէնի ո՞ր մասն է կազմում։

126. Շաբաթն ունի 7 օր։ Մի օրը շաբաթուայ ո՞ր մասն է կազմում։

127. 4 մատիտն արժէ 8 կոպէկ։ Ո՞րքան կ' արժենայ 3 մատիտը։

128. Ուսուցիչը 8 գրչածայր հաւասարապէս բաժանեց 4 աշակերտի։ Քանի գրչածայր ստացաւ ամեն մէկը։

129. 9-ի մէջ քանի անգամ կայ 1-ը, 3-ը, 5-ը, 4-ը, 7-ը, 6-ը։

130. Երեքը քանի անգամ փոքր է 9-ից։

131. Ո՞րքան կը լինի 9-ի երրորդ, իններորդ մասը։

132. 9 թերթ թղթից քանի տետր դուրս կը գայ, եթէ ամեն մի տետրի համար վերցնելու լինենք մի թերթ, 2 թերթ, 3 թերթ, 4 թերթ։

133. Մեր տանը 3 օրում գնում է 9 գրվանքա շաքար։ Քանի գրվանքա շաքար կ'երթայ 2 օրում։

134. Քանի անգամ պիտի կրկնենք 2-ը, 5-ը, որ ստանանք 10։

135. Ո՞րքան կլինի 10-ի կէսը, 10 ի 5-րդ մասը։

136 Քանի օր բաւական կը լինի 10 մանէթը, եթէ օրական ծախսենք 2 մանէթ, 5 մանէթ։

137. 10 արշինը քանի սաժէն և քանի արշին է անում։

138. Մահուդի արշինն արժէ 6 մանէթ։ Ո՞րքան կ'արժենայ կէս արշինը, մի երրորդական արշինը։

139. Հայրը որդուն նուիրեց 9 մանէթ։ Այդ փողերի երրորդ մասով նա առաւ երեք հաւասար արժողութեան գիրք։ Ի՞նչ արժէր ամեն մի գիրքը։

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ

140. Ո՞ր թիւը պիտի փոքրացնենք 5 անգամ, որ ստանանք 2։

141. Ո՞ր թիւը պիտի մեծացնենք 2 անգամ, որ ստանանք 4, 6, 8, 10։

142. Քանի անգամ պիտի մեծացնենք 3-ը, որ ստանանք 6, 9։

143. Ո՞ր թուի երրորդ մասն է 3-ը։ Ո՞ր թուի կէսն է 2-ը, 4-ը, 3-ը։

144. Գտէք 10 ի հինգերորդ մասը. շատացրէք այդ 4 անգամ, ստացած թիւն էլ պակսեցրէք 2 անգամ։

145. Գիւղացին աղաց 5 տոպրակ ցորեն. ամեն մի տոպրակում կար 2 փութ։ Այդ ալիւրի հինգերորդ մասը նա ծախեց։ Քանի փութ ծախեց։

146. Գիւղացին ունէր 10 փութ կորեկ։ Այդ կորեկի կէսը նա ծախեց փութը 2 մանէթով։ Քանի մանէթ ստացաւ նա։

147. 5 ձին հաւասարապէս 10 փութ խոտ կերան։ Քանի փութ խոտ կ'ուտեն 3 ձին։

148. Այգում 8 խնձորենի կայ. դրանցից 4 անգամ պակաս սալորենի, իսկ սալորենուց 3 անգամ աւելի կեռասենի։ Քանի կեռասենի կայ այգում։

149. Գիւղացին առաջին օրը բերեց 8 սայլ խոտ, երկրորդ օրը՝ 4 անգամ պակաս, իսկ երրորդ օրը՝ երկրորդ օրուայ բերածից 5 անգամ աւելի։ Քանի սայլ խոտ բերեց նա երրորդ օրը։

150. Երեխան գնեց 3 թերթ սպիտակ թուղթ և 3 անգամ դրանից աւելի մոխրագոյն թուղթ։ Մոխրագոյն թղթից նա կարեց 3 թերթանոց տետրակներ։ Քանի տետրակ կարեց նա։

151. Կալուածատէրը 8 կով ունէր, 4 անգամ կովերից պակաս ձի, իսկ ձիաներից 3 անգամ աւելի ոչխար։ Քանի ոչխար ունէր նա։

152. 2 խնձորի տուին 4 հատ 2 կոպէկանոց։ Որքան արժէր ամեն մի խնձորը։

153. Մի աշակերտ մի ժամում արտագրում է 2 թերթ, միւսը երկու անգամ նրանից արագ է գրում։ Քանի ժամում կ՛արտագրի երկրորդ աշակերտը մի 8 թերթանոց տետրակ։

154. Քանի մանէթ կը վերցնի արհեստաւորը 5 օրում, եթէ նա չորս օրում ստանում է 8 մանէթ։

155. Կէս դիւժին մատիտը երեխային բաւականանում է 3 ամիս։ Քանի ամիս բաւական կը լինի նրան 10 մատիտը։

156. Եղբայրը 10 տարեկան է. մի քոյրը նրանից 5 անգամ փոքր է, իսկ միւսը 4 անգամ մեծ է այդ քրոջից։ Քանի տարեկան է մեծ քոյրը։

157. Երեխան նախաճաշի համար օրական ստանում է 8 կոպէկ. այդ գումարից նա ծախսում է երկու անգամ պակաս։ Քանի կոպէկ կը խնայի նա երկու օրում։

158. Հինգ խնձորն արժէ 10 կոպէկ։ Որքան կարժենայ 3 խնձորը։

159. Մի մարդ առաւ 2 գրվանքա 4-անոց մոմ. օրական նա գործ էր ածում 2 մոմ։ Քանի օր բաւական կը լինի նրան այդ մոմը։

160. 4 հատ աբրեշումի աղլուխին տուին 8 մանէթ։ Քանի այդպիսի աղլուխ կարելի է գնել 10 մանէթով։

161. Բանուորը 5 շաբաթում աշխատեց 10 մանէթ և երկու շաբաթուայ աշխատանքը տուն ուղարկեց։ Ի՞նչքան փող ուղարկեց տուն։

162. Մի երեխայ տուեց միւսին 2 հատ խաղալիք, որոնցից ամեն մէկն արժէր 5 կոպէկ. դրա փոխարէն նա ստացաւ երկու խնձոր և երկու կոպէկ փող։ Ի՞նչ արժէր ամեն մի խնձորը։

163. Հայրն իր որդուն տուեց 2 հատ 3 կոպէկանոց և 2 հատ էլ 2 կոպէկանոց։ Երեխան այդ փողով գնեց երկու հատ գրչակոթ։ Ի՞նչ արժէ ամեն մի գրչակոթը։

164. Ճանապարհորդը 3 ժամում անցաւ 9 վերստ։ Քանի վերստ է անցել նա երկու ժամում։

165. Ուսումնարանում առաջին օրն ընդունեցին 2 երեխայ, իսկ երկրորդ օրը 4 անգամ աւելի։ Այդ երեխաներին երկու-երկու նստացրին նստարանների վրայ։ Քանի նստարան բռնեցին նրանք։

ՋՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

166. Մի կառապան ունէր 3 զոյգ ձի, իսկ միւսը երեք երրեակ։ Նրանցից ո՞րը շատ ունէր և քանիսով շատ։

167. Կալուածատէրը վարձեց մի ծառայ՝ ամսական 5 մանէթով. 2 ամիս ծառայելուց յետոյ ծառան ստացաւ 6 մանէթ փող և մի հատ չուխայ։ Որքան արժէր այդ չուխան։

168. Երեխան գնեց երկու մատիտ և տուեց 6 կոպէկ. նա էլի գնեց երկու գիրք։ Որքան վճարեց նա այդ երկու

գրքին, եթէ իւրաքանչիւր գիրքը 2 կոպէկ թանգ արժէր մի մատիտից։

169. Երկու գրպանումս 7 կոպէկ ունիմ. բայց մի գրպանումս մի կոպէկ աւելի կայ, քան միւս գրպանումս։ Քանի կոպէկ կայ ամեն մի գրպանումս։

170. Մի մարդ 8 մանէթ ունէր։ Այդ փողի կէսով նա երկու հատ հաւասար արժողութեամբ գիրք առաւ։ Ի՞նչ արժէր մի գիրքը։

171. Մրգավաճառը երկու խնձորն առնում է երեք կոպէկով, իսկ ինքը չորս խնձորը ծախում 8 կոպէկով։ Նա քանի կոպէկ կաշխատի, եթէ ծախի 6 խնձոր։

172. Երկու մրգավաճառ փոխեցին իրանց մրգերը. առաջինը տուեց երկրորդին 4 գրվանքա տանձ, որի գրվանքան արժէր 2 կոպէկ, իսկ երկրորդը դրա փոխարէն տուեց մի քանի գրվանքա խնձոր, որի գրվանքան արժէր 4 կոպէկ։ Քանի գրվանքա խնձոր ստացաւ առաջինը։

173. Երկու աղջիկ միասին 9 խնձոր քաղեցին. դրանցից մէկը 3 խնձոր աւելի քաղեց միւսից։ Քանի խնձոր քաղեց նրանցից ամեն մէկը։

174. Գիւղացին 9 մանէթ ունէր։ Այդ փողի երրորդ մասով ալիւր գնեց, իսկ մնացածի կէսը տուեց շորի։ Քանի մանէթ մնաց իրան։

175. Ծառան ամսական ստանում էր 3 մանէթ. երեք ամսուայ փողը որ ստացաւ, երեք մանէթ ուղարկեց ծնողներին, իսկ մնացած փողով 3 զոյգ չուստ առաւ։ Ո՞րքան արժէր չուստի զոյգը։

176. Կաւիճի գրվանքան արժէ 2 կոպէկ, իսկ ալիւրը երկու անգամ կաւիճից թանգ է։ Ո՞րքան պիտի վճարել երկու գրվանքա ալիւրին։

177. Պղնձագործը 10 գրվանքա պղինձ ունէր։ Նա այդ պղնձից շինեց 5 գրվանքանոց կաթսաներ. բոլոր կաթսաները ծախեց հատը 3 մանէթով։ Առնողը տուեց տասը

մանէթանոց թուղթ փող։ Ո՞րքան փող պիտի յետ ստանայ նա։

178. Մի մարդ առաւ 3 տոպրակ գետնախնձոր, որոնցից ամեն մէկում կար 3 փութ. բացի դրանից էլի առաւ մի փութ։ Քանի՞ ամիս բաւական կը լինի նրան այդ գետնախնձորը, եթէ ամսէնը գործ ածէ 2 փութ։

179. Մանրավաճառը ծախեց 5 գրվանքա հոն՝ գրվանքան 2 կոպէկով. այդ փողով նա առաւ 2 գրվանքա դեղձ և իրեն էլի մնաց 2 կոպէկ։ Ի՞նչ արժէր դեղձի գրվանքան։

180. Նաւթի փութն արժէ 2 մանէթ. մի մարդ առաւ 4 փութ նաւթ և տուեց երկու հատ հինգ մանէթանոց ոսկի։ Ի՞նչքան փող պիտի յետ ստանայ։

181. Մանրավաճառը խնձորի հատն առնում էր 3 կոպէկով, իսկ ինքը ծախում 5 կոպէկով։ Ի՞նչքան կաշխատի նա, եթէ ծախի 5 խնձոր։

182. Շաքարի փութն արժէ 6 մանէթ, ալիւրը երեք անգամ էժան է շաքարից, իսկ միսը 3 մանէթով թանգ է ալիւրից։ Ի՞նչ արժէ երկու փութ միսը։

183. Վաճառականն առաւ 10 արկղ մոմ. մէկին ծախեց նա այդ բոլոր մոմի հինգերորդ մասը, միւսին մրնացածի կէսը։ Էլի քանի արկղ մոմ մնաց նրան։

184. Ձէթով լիքը ամանը բաշում է 10 գրվանքա, իսկ դատարկ ամանը մի գրվանքա։ Քանի օր բաւական կլինի այդ ամանի ձէթը, եթէ օրական գործածենք 3 գրվանքա։

185. Մի սաժէն ղաժի փայտն արժէ 8 մանէթ, իսկ մի սաժէն հաճարի փայտը 4 մանէթով նրանից էժան է։ Ի՞նչքան պիտի վճարենք, եթէ գնելու լինենք երկու և կէս սաժէն հաճարի փայտ։

186. Գիւղացին առաջին ժամում անցաւ 3 վերստ, իսկ երկրորդ ժամում [illegible]։ Էլի հրքան վերստ է մնում անցնելու նրան, եթէ բոլոր ճանապարհը 10 վերստ է։

29484-67

ՀՍՍՌ ... ՍՍՀՄ
Ա. Հա. Ա. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

187. Տղաժարդը գործաբանում ամսական ստանում է 10 մանէթ, կինը երկու անգամ մարդուց պակաս, իսկ երեխան 2 մանէթով կնոջից պակաս։ Ո՞րքան փող կը ստանան երեք երեխան մի ամսում։

188. Այգեպանն ունէր 10 տանձենի. առաջին անգամ նա ծախեց այդ ծառերի հինգերորդ մասը, յետոյ ինացածի չորրորդ մասը, և վերջապէս ինացածի երրորդ մասը։ Քանի ծառ ինաց նրան։

189. Պարտէզում տնկած են 9 հատ վարդի և երեք հատ յասմիկի թուփ։ Վարդենիները քանի անգամ աւելի են յասմիկի թփերից։

190. Դիւղացին ցանեց 2 փութ ցորեն և ստացաւ մէկին—5։ Ստացած ցորենի կէսը պահեց սերմի համար, սերմացուից 3 փութ պակաս աղաց, իսկ ինացածը ծախեց։ Նա քանի փութ ծախեց։

191. Սայլը առաջին երկու ժամում անցաւ հինգական վերստ, իսկ երրորդ ժամում 6 վերստ պակաս առաջին երկու ժամում գնացածից։ Քանի վերստ գնաց սայլը երրորդ ժամում։

192. Տանտիկինն ունէր երկու հատ 3 կոպէկանոց և մի հատ 2 կոպէկանոց։ Նա ուզում էր գնել 3 հատ փայտի գդալ, բայց պակասում էր մի կոպէկ։ Ո՞րքան արժէ մի գդալը։

193. Երեխան 10 կոպէկ ունէր։ Այդ փողի հինգերորդ մասով նա մատիտ առաւ, ինացածի կէսով տետրակ, և ինչ որ ինաց, նրանով գնեց երկու հատ գրչակոթ։ Ո՞րքան արժէր մի գրչակոթը։

194. Տանտիկինն ունէր 2 գրվանքա հինգանոց մոմ և օրէնը գործ էր ածում 2 մոմ։ 3 օրից յետոյ քանի մոմ կը ինար նրան։

195. Մանրավաճառը տանձի գրվանքան առնում էր 7 կոպէկով, իսկ ինքը ծախում 9 կոպէկով։ Քանի գրվանքա տանձ ծախեց նա, եթէ բոլորի մէջ աշխատեց 10 կոպէկ։

196. Հայրը քաղեց 9 վարդ, եղբայրը երեք անգամ հօրից պակաս, իսկ քոյրը 5 վարդով եղբօրից աւելի։ Քանի վարդ քաղեց քոյրը։

197. Հինգ գրվանքա նաւթն արժէ 10 կոպէկ, իսկ երկու գրվանքա կուպրը 8 կոպէկ։ Կուպրը քանի անգամ թանգ է նաւթից։

198. Արհեստաւորն օրական ստանում էր 2 մանէթ։ Քանի մանէթ ստացաւ նա մի շաբաթուայ ընթացքում, եթէ բացի կիրակիից չէր բանել նաև ուրբաթ օրը։

199. Պղնձագործը 10 գրվանքա պղինձ ունէր. այդ պղնձից նա շինեց 2 կաթսայ՝ ամեն մէկը 3 գրվանքանոց, իսկ ինացած պղնձից մի քանի հատ թաս՝ ամեն մէկը 2 գրվանքանոց։ Քանի թաս շինեց նա։

200. Մանրավաճառը երեք փայտի գդալը ծախում էր 9 կոպէկով, իսկ ինքն առնում էր 6 կոպէկով։ Ի՞նչքան կաշխատի նա, եթէ ծախի 10 գդալ։

201. Փայտավաճառին ծախած փայտի համար տուին մի հատ 10 մանէթանոց և նա յետ տուեց 2 մանէթ։ Քանի սաժէն փայտ էին առել նրանից, եթէ փայտի մի սաժէնն արժէ 4 մանէթ։

202. Երկաթի լարը 5 կտոր արին. առաջին կտորը 10 արշին էր, երկրորդը 2 անգամ կարճ էր առաջինից, երրորդը չորս արշինով երկար էր երկրորդից, չորրորդը 3 անգամ կարճ էր երրորդից, իսկ հինգերորդը 2 անգամ երկար էր չորրորդից և էլի 2 արշին աւելի։ Ո՞րքան էր հինգերորդ կտորի երկարութիւնը։

II. ԴՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԵՍՆԵԼԿՆԵՐՈՎ ՀԵՐԻՒՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ

Գ Ո Հ Ա Ր Ո Հ Մ Ն

203. Մի խնձորենուց 20 խնձոր քաղեցին, իսկ միւսից 30։ Քանի խնձոր քաղեցին երկու խնձորենուց։

204. Երեխան անտառում գտաւ 40 հատ սպիտակ սունկ և դրանից 20-ով աւելի սև սունկ։ Քանի սև սունկ գտաւ նա։

205. Պարտիզպանը մի մարգից ծախեց 30 վարունգ, իսկ միւսից 60։ Քանի վարունգ ծախեց նա երկու մարգից։

206. Երեք մարդ հունձ էին անում։ Առաջինը հնձեց և կապեց 40 խուրձ, երկրորդը 30, իսկ երրորդը 20 խուրձ։ Քանի խուրձ կապեցին երեքը միասին։

207. Գիւղացին իր ունեցած փողից 70 կոպէկ ծախսեց և իրան էլի մնաց 30 կոպէկ։ Քանի կոպէկ ունէր նա։

208. Ուսուցիչարանը երեք բաժանմունք ունի. մէկում կայ 20 աշակերտ, միւսում 40, իսկ երրորդում 30 աշակերտ։ Քանի աշակերտ կայ ուսուցիչարանում։

209 Մրգավաճառը մէկ մարդու ծախեց 2 տասնեակ նարինջ, իսկ միւսին մի տասնեակ առաջինից աւելի։ Քանի տասնեակ նարինջ ծախեց նա երկուսին։

210. Գիւղացին առաւ 20 կոպէկի աղ և 30 կոպէկի իւղ. նրան էլի մնաց 10 կոպէկ։ Ի՞նչքան փող ունէր նա։

211 Մանրավաճառն առաջ ծախեց երկու տասնեակ խնձոր. յետոյ ծախեց մնացած հինգ տասնեակը։ Ընդամենը քանի տասնեակ խնձոր ծախեց նա։

212. Վաճառականը մի գիւղացու ծախեց 40 փութ ալիւր, միւսին 20 փութ, իսկ երրորդին 30 փութ։ Քանի փութ ալիւր ծախեց նա։

213. Նախրում արածում էին 40 կով և դրանցից 50-ով աւելի ոչխար։ Քանի ոչխար կար նախրում։

214. Երեխան քարետախտակին վճարեց 10 կոպէկ, դրքին 20 կոպէկ նրանից աւելի և իրեն էլի մնաց 20 կոպէկ։ Ի՞նչքան փող ունէր նա։

215. Մանրավաճառն առաջին օրը ծախած ապրանքի համար ստացաւ 20 կոպէկ, իսկ երկրորդ օրը՝ 30 կոպէկ աւելի։ Ի՞նչքանի առուտուր արաւ երկրորդ օրը և երկու օրում միասին։

216. Որդին աշխատեց 30 մանէթ, իսկ հայրը 20 մանէթ նրանից աւելի։ Քանի մանէթ աշխատեցին հայր ու որդի միասին։

Հ Ա Ն Ո Հ Մ Ն

217. Տակառում 40 վեդրօ ջուր կար. այնտեղից հանեցին 30 վեդրօ։ Քանի վեդրօ ջուր մնաց տակառում։

218. Պարտիզպանը մի մարգից կտրեց 50 գլուխ կաղամբ, իսկ միւսից 20 գլուխ պակաս։ Քանի գլուխ կաղամբ կտրեց նա երկրորդ մարգից։

219. Մի գիւղացի 60 գլուխ ոչխար ունէր, իսկ միւսը 30 գլուխ պակաս։ Քանի գլուխ ոչխար ունէր երկրորդ գիւղացին։

220. Անտառում 90 հատ ղաժի ծառ կար. դրանցից 30-ը կտրեցին։ Քանի ծառ մնաց։

221 Գիւղացին 50 փութ ցորեն աղաց. դրանից 20 փութը պահեց, իսկ մնացածը ծախեց։ Քանի փութ ծախեց նա։

222. Գիւղացին քաղաք բերեց վաճառելու 100 ձու. 4 տասնեակը ծախեց։ Էլի ի՞նչքան մնաց ծախելու։

223. Տանիքի վրայ նստած էին 60 աղաւնի. նրանցից 30-ը թռան։ Քանիսը մնացին։

224. Երեխան 80 կոպէկ ունէր. քառասունը ծախսեց։ Քանի կոպէկ մնաց նրան։

225. Բանուորն ստանում էր օրական 80 կոպէկ. երեսուն կոպէկը նա ծախսում էր կերակրի համար, իսկ 20 կոպէկը բնակարանի վարձ էր տալիս։ Քանի կոպէկ էր հնուժ նրան օրէնը։

226. Աղջիկը հօրից ստացաւ մի մանէթ. այդ փողից 30 կոպէկի քաղցրաւենիք առաւ, իսկ քսան կոպէկը տուեց խրծիկի։ Քանի կոպէկ մնաց նրան։

227. Գիւղացին 20 կոպէկի կուպր գնեց, 30 կոպէկի նաւթ. նա մի մանէթանոց տուեց։ Ո՞րքան մանրափող պիտի յետ ստանայ։

228. Զկնորսը որսաց 60 հատ իշխան ձուկ և իշխանից քառասունով պակաս գեղարքունի։ Նա քանի գեղարքունի որսաց։

229 Գիւղացին 80 մանէթով մի ձի առաւ և ձիուց 20 մանէթ աժան մի կով։ Ի՞նչ արժէր կովը։

230. Մի գիրք 100 երես ունի, իսկ միւսը 70 երես։ Քանի երեսով մէկը աւելի է միւսից։

231 Պապը 90 տարեկան է, իսկ հայրը 30 տարով պապից չահել է։ Քանի տարեկան է հայրը և քանի տարով մեծ իր որդուց, եթէ որդին քառասուն տարեկան է։

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ԵՒ ՀԱՆՈՒՄՆ

232. Ո՞րքան պիտի աւելացնենք 30-ին, որ ստանանք 40, 80, 90։

233. Ո՞ր թուին պիտի աւելացնենք 50, որ ստանանք 90, 70, 80։

234. Ո՞ր թուից պիտի պակսեցնենք 40, որ ստանանք 60, 50, 30։

235. Ո՞րքան պիտի հանենք 90-ից, որ ստանանք 50, 40, 60։

236. 50-ը քանիսո՞վ է պակաս 70-ից և քանիսո՞վ աւելի 20-ից։

237. Պայտառը առաջին օրը պայտեց 40 ձի, իսկ երկրորդ օրը 20 ձի պակաս։ Նա քանի ձի պայտեց ընդամենը։

238. Պահարանի մի դարակի վրայ կայ 30 գիրք, միւսի վրայ առաջինից 20 գիրք աւելի, իսկ երրորդի վրայ երկրորդից 40-ով պակաս։ Քանի գիրք կայ պահարանում։

239. Գիւղացին 40 փութ ցորեն ունէր, դրանից երեսուն փութ աւելի գարի և գարուց 50 փութ պակաս կորեկ։ Քանի փութ կորեկ ունէր նա։

240. Մրգավաճառը մի կողովում ունէր 20 խնձոր, իսկ միւս կողովում 40։ Այն խնձորներից 30-ը ծախեց։ Քանի խնձոր մնաց իրեն։

241. Երեխան 80 կոպէկ ունէր. նա 20 կոպէկով մի գիրք առաւ, 30 կոպէկի էլ թուղթ։ Քանի կոպէկ մնաց իրեն։

242. Գիւղացին 100 փութ խոտ ունէր. նա մէկին ծախեց 40 փութ, միւսին 20 փութ պակաս, իսկ երրորդին առաջնից 10 փութ պակաս։ Քանի փութ խոտ մնաց իրեն։

243. Երեք սայլի վրայ բարձած է 90 փութ ալիւր։ Առաջին սայլում կայ 30 փութ, երկրորդում 10 փութ պակաս առաջինից։ Քանի փութ է բարձած երրորդ սայլին։

244. Մանրավաճառը 70 կոպէկի իւղ առաւ և ծախեց 90 կոպէկով։ Մէջը քանի կոպէկ աշխատեց։

245. Գիւղացին ձի, կով և ոչխար առաւ և բոլորին վճարեց 100 մանէթ։ Կովին տուել էր 40 մանէթ, իսկ ոչխարին 30 մանէթ կովից պակաս։ Ի՞նչ արժէր ձին։

246. Գիւղացին ծախեց 60 մանէթի հաց և 30 մանէթի խոտ. ստացած փողերով նա մի ձի առաւ ու մի կով. ձին արժէր 50 մանէթ, իսկ կովը 30։ Էլի քի՞նչքան փող մնաց նրան։

247. Կալուածատէրը մի հողից վերցրեց 30 չեռվերտ գարի, միւսից 10 չեռվերտ նրանից պակաս, իսկ երրորդից 50 չեռվերտ։ Այդ գարուց 40 չեռվերտը ծախեց, իսկ 30 չեռվերտը իր ձիաներին ուտացրեց։ Ի՞նչքան գարի մնաց նրան։

248. Երեխան մի մանէթ ունէր. 30 կոպէկի թուղթ առաւ, իսկ 20 կոպէկի գիրք. թղթի ու գրքի վրայ ծախսածից 40 կոպէկ պակաս էլ տուեց մրգի։ Ի՞նչքան փող մնաց նրան։

249. Տատը մի քանի շուլայ հաստ ու բարակ թել մանեց։ Երբ նա ծախեց 30 շուլայ բարակ և 40 շուլայ հաստ թել, իր մօտ մնաց հաստ թելից 50 և բարակ թելից 40 շուլայ։ Քանի շուլայ հաստ ու քանի շուլայ բարակ թել էր մանել տատը։

250. Բանուորը տարեկան 100 մանէթ էր ստանում։ Իր ռոճկից 50 մանէթ տուն ուղարկեց, յետոյ էլ, երբ տարին վերջացաւ, հաշիւ տեսնելիս ստացաւ 20 մանէթ փող և մի ձի։ Ի՞նչքան արժէր ձին։

251. Մրգավաճառը մէկին տանձ ու խնձոր ծախեց։ Տանձն արժէր 20 կոպէկ, իսկ խնձորը 30 կոպէկ տանձից աւելի։ Առնողն ի՞նչքան փող էր տուել, եթէ մրգավաճառը յետ տուեց 30 կոպէկ։

Բ Ա Զ Մ Ա Պ Ա Տ Կ Ո Ւ Մ

252. Խաղողի գրվանքան արժէ 10 կոպէկ. իսկ դեղձը երկու անգամ թանգ է խաղողից։ Ո՞րքան արժէ դեղձի գրվանքան։

253 Մրգավաճառն ունէր 3 թաբախ խնձոր, ամեն մի թաբախում 20 հատ։ Քանի խնձոր ունէր նա։

254. Երկրագործը մի տեղից բերեց 20 փութ խոտ, իսկ միւս տեղից 5 անգամ դրանից աւելի։ Քանի փութ խոտ բերեց նա երկրորդ տեղից։

255. 4 կին մարգեր էին քաղհան անում։ Նրանցից ամեն մինը 20 մարգ մաքրեց։ Քանի մարգ մաքրեցին 4-ը միասին։

256 Որդին տասը տարեկան է, իսկ հայրը 5 անգամ մեծ է որդուց։ Քանի տարեկան է հայրը։

257. Խոհարարն առաւ 20 գրվանքա ալիւր՝ գրվանքան 5 կոպէկով և 5 գրվանքա միս՝ գրվանքան 20 կոպէկով։ Քանի մանէթ ծախսեց նա։

258 Նախրում 20 կով կայ և կովերից 5 անգամ աւելի ձի։ Քանի ձի կայ նախրում։

259. Մի մրգավաճառից 3 տանեակ նարինջ առան, իսկ միւսից 3 անգամ աւելի։ Քանի նարինջ առան երկրորդ մրգավաճառից։

260. 3 մարգից վարունգ քաղեցին՝ ամեն մէկից 30 հատ։ Քանի վարունգ քաղեցին ընդամենը։

261. Շաքարի գրվանքան արժէ 20 կոպէկ։ Ո՞րքան պիտի վճարել 3, 4, 5 գրվանքա շաքարին։

262. Մի չեռվերիկ գարին քաշում է 30 գրվանքա։ Ի՞նչքան կը քաշի 2, 3 չեռվերիկը։

263. Երկաթուղու գնացքը մի ժամում գնում է 20 վերստ։ Քանի վերստ կանցնի նա 2, 3, 4 ժամում։

264. Պարահզպանը քաղեց 100 վարունգ։ Այդ վարունգներից 20-ը ծախեց մէկին և 3 անգամ աւելի միւսին։ Էլի քանի վարունգ մնաց իրեն։

265. Մի գրվանքա շաքարն արժէ 20 կոպէկ, իսկ սուրճը 3 անգամ շաքարից թանգ է։ Ես առայ մի գրվանքա շաքար և մի գրվանքա սուրճ ու տուի մի մանէթանոց։ Ո՞րքան մանրափող պիտի յետ ստանամ։

Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ն

266. Աշակերտը գնեց 2 հատ հաւասար արժողութեան գիրք և վճարեց 40 կոպէկ։ Ի՞նչ արժէր ամեն մի գիրքը։

267. Փայտավաճառը 4 մարդու ծախեց հաւասար քանակութեամբ 80 սաժէն փայտ։ Քանի սաժէն առաւ ամեն մէկը։

268. Եղբայրը քաղեց 80 ծաղիկ, քոյրը 4 անգամ նրանից պակաս։ Քանի ծաղիկ քաղեց քոյրը։

269. Հայրը վաթսուն տարեկան է, որդին 3 անգամ փոքր է հօրից, իսկ աղջիկը 2 անգամ փոքր է եղբօրից։ Քանի տարեկան է աղջիկը։

270. Գիւղացին իր հողերից հարեց 80 փութ խոտ՝20-ական փութ ամեն մի հողից։ Քանի հող ունէր գիւղացին։

271. Այգեպանը մի ծառից քաղեց 60 խնձոր, իսկ միւսից 2 անգամ պակաս։ Քանի խնձոր քաղեց նա երկրորդ ծառից։

272. Գիւղացին 80 մանէթով կովեր առաւ՝ ամեն մի կովը 20 մանէթով։ Քանի կով առաւ նա։

273. Կառապանը իր ձիաներին օրական տալիս էր 20 գրվանքա գարի։ Քանի օր բաւական կը լինի նրան 100 գրվանքա գարին։

274. Մէկը միւսին պարտ էր 100 մանէթ։ Նա այդ պարտքը խոստացաւ վճարել ամսական 20 մանէթ տալով։ Քանի ամսում կվճարի նա իր պարտքը։

275. Մի մշակ կապեց 80 խուրձ, իսկ միւսը 4 անգամ նրանից պակաս։ Քանի խուրձ կապեց երկրորդ մշակը։

276. Ձին արժէ 100 մանէթ, իսկ կովը 5 անգամ ձիուց էժան է։ Քանի մանէթ արժէ կովը։

277. Մեղուաբոյծը փեթակներից հանեց 90 գրվանքա մեղր. այդ մեղրի երրորդ մասը ծախեց։ Ի՞նչքան մեղր մնաց իրեն։

278. Դինեվաճառը առաւ 80 վեդրօ գինի։ Այդ գինու չորրորդ մասը ածեց 10 վեդրանոց, իսկ մնացած գինին 20 վեդրանոց տակաւնների մէջ։ Քանի հատ 10 և քանի 20 վեդրանոց տակառ լցրեց նա։

ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

279. Ո՛ր թիւը պիտի պակսեցնենք 5 անգամ, որ ստանանք 20, 10-ը։

280. Ո՛ր թիւը պիտի շատացնենք 3 անգամ, որ ստանանք 60, 90. շատացնենք 4 անգամ, որ ստանանք 80։

281. Քանի անգամ պիտի պակսեցնենք 80-ը, որ ստանանք 20, 40. 90-ը որ ստանանք 30. 50-ը, որ ստանանք 10։

282. Քանի անգամ պիտի շատացնենք 30-ը, որ ստանանք 60. 30-ը, ո՛ր ստանանք 90. 50-ը, որ ստանանք 100։

283. 30-ը ո՛ր թուի կէսն է, ո՛ր թուի երրորդ մասը։ 20-ը որ թուի կէսն է, ո՛ր թուի երրորդ մասը, ո՛ր թուի չորրորդ մասը և ո՛ր թուի հինգերորդ մասը։

284. Դէ՛ք 90-ի երրորդ մասը, շատացրէք այն 2 անգամ, յետոյ շատացրէք 20-ով, պակսեցրէք 4 անգամ։

285. Դէ՛ք մի մանէթի հինգերորդ մասը, շատացրէք այն 4 անգամ, պակսեցրէք 40 կոպէկ, աւելացրէք 30 կոպէկ և պակսեցրէք 7 անգամ։ Քանի կոպէկ կը լինի։

286. Վաճառականը երկուշաբթի օրը ծախեց 40 մանէթի ապրանք, երեքշաբթի՝ 30 մանէթի, իսկ չորեքշաբթի օրը՝ առաջին երկու օրուայ ծախածից 60 մանէթ պակաս։ Նա ի՞նչքան ծախեց այդ երեք օրը։

287. Գիւղացին 90 փութ գետնախնձոր ունէր։ Դրա երրորդ մասը պահեց իր համար, իսկ մնացածը ծախեց երեք մարդու վրայ հաւասարապէս։ Քանի փութ առաւ ամեն մէկը։

288. Մի արկղում 20 գրվանքա մոմ կայ, միւսում դրանից 3 անգամ աւելի, իսկ երրորդում առաջին և երկրորդ արկղից 4 անգամ պակաս։ Ի՞նչքան մոմ կայ երրորդ արկղում։

289. Ուսուցիչարանում 60 աշակերտ կայ և 3 անգամ պակաս աշակերտուհի։ Քանի երեխայ կայ ուսուցիչարանում։

290. Զարչին 5 կով առաւ և վճարեց 100 մանէթ։ Այդ կովերից երկուսը պահեց, մնացածը ծախեց հատը 30 մանէթով։ Մէջն ինչքան փող աշխատեց։

291 Երկու մարդ միասին 100 գլուխ կաղամբ առան. դրանցից մէկը միւսից 20 գլուխ աւելի վերցրեց։ Քանի գլուխ կաղամբ վերցրեց ամեն մէկը։

292. Այգեպանը մի ծառից քաղեց 70 հատ խնձոր, իսկ միւսից 40-ով պակաս։ Այդ խնձորները ծախեց իւրաքանչիւր 5 տասնեակը 20 կոպէկով։ Ինչքան փող ստացաւ։

293. Կալի վրայ 90 խուրձ կար. առաջին օրը կապեցին այդ բոլորի երրորդ մասը, երկրորդ օրը մնացածի կէսը։ Էլի քանի խուրձ մնաց կապելու։

294. Երկու մրգավաճառ իրենց մրգերը փոխեցին. առաջինը տուեց 8 գրվանքա սալոր, որի գրվանքան արժէր 10 կոպէկ. միւսը տուեց մի քանի գրվանքա դեղձ, որի գրվանքան արժէր 20 կոպէկ։ Քանի գրվանքա դեղձ տուեց երկրորդ մրգավաճառը։

295. Մանրավաճառը 60 հատ կիտրոն ծախեց՝ իւրաքանչիւր 30 հատը 50 կոպէկով։ Ինչքան փող ստացաւ նա։

296. Երեք երեխայ միասին 90 կոպէկ ունէին։ Նրանք հաւասարապէս ծախսեցին և դրանից յետոյ մէկի մօտ մնաց 20 կոպէկ, միւսի մօտ 30, իսկ երրորդի մօտ 10 կոպէկ։ Ինչքան փող ունէր նրանցից ամեն մէկը։

297. Մրգավաճառը ծախեց 100 վարունգ՝ իւրաքանչիւր 50 հատը 30 կոպէկով։ Նա այդ վարունգների մէջ ինչքան ճնաս արաւ, եթէ ինքը ամեն մի տասնեակը առել էր 8 կոպէկով։

298. Պարտիզպանը կամենում էր 60 մարգ վարունգ ու կաղամբ ցանել, բայց այնպէս, որ վարունգի մարգերը 2 անգամ աւելի լինին կաղամբի մարգերից։ Նա քանի մարգ վարունգ ցանեց։

299. Երկու կառապան իրենց ձիանները պահելու համար վճարեցին 100 մանէթ։ Նրանցից մէկը պահ էր տուել 3 ձի, իսկ միւսը 2 ձի։ Քանի մանէթ վճարեց նրանցից ամեն մէկը։

300. Տանտիկինը 80 գրվանքա հոն առաւ և իւրաքանչիւր 8 գրվանքին վճարեց 10 կոպէկ։ Ինչքան փող ծախսեց նա։

301. Մրգավաճառը մի զոյգ ձմերուկն առնում էր 40 կոպէկով, իսկ ինքը զոյգը ծախում 60 կոպէկով։ Ինչքան կաշխատի նա, եթէ ծախի 8 ձմերուկ։

302. Մանրավաճառը իւրաքանչիւր 4 փութ ձէթն առնում էր 20 մանէթով, իսկ ինքը ծախում փութը 7 մանէթով։ Ինչքան կ՛աշխատի նա, եթէ ծախի 10 փութ ձէթ։

303. Մի գրագիր մի ժամում արտագրում է 4 թերթ, իսկ միւսը երկու անգամ նրանից պակաս։ Քանի ժամում երկուսը միասին կ՛արտագրեն 60 թերթ թուղթ։

304. Երկու երեխայ միասին 70 ընկոյզ ունէին. երբ որ նրանք հաւասար թուով կերան, մէկի մօտ մնաց 20, իսկ միւսի մօտ 10։ Սկզբում քանի ընկոյզ ունէր նրանցից ամեն մէկը։

305. Վաճառականը իւրաքանչիւր երեք սաժէն փայտն առնում էր 20 մանէթով, իսկ ինքը սաժէնը ծախում 10 մանէթով։ Ինչքան փող կաշխատի նա, եթէ ծախի 9 սաժէն փայտ։

306. Նախրում 100 գլուխ ապրանք կայ. տասերորդ մասը ձիաններ են, հինգերորդ մասը կովեր, իսկ մնացածը ոչխարներ։ Քանի ձի, կով և ոչխար կայ նախրում։

307. Ապակի գցողը մի տան մէջ նստացրեց 80 հատ ապակի, միւսում 4 անգամ պակաս, իսկ երրորդում 2 անգամ երկրորդից աւելի։ Քանի ապակի գցեց նա երրորդ տանը։

308. Երկրագործը 20 չետվերտ ցորեն ցանեց և 30

չեռվերտ գարի։ Ցորենը տուեց մէկկին-հինգ, իսկ գարին մէկկին-երեք։ Նա որից աւելի ստացաւ և ի՞նչքանով աւելի։

309. Երեխան մի մանէթ ուներ. այդ փողից 30 կոպէկի թուղթ առաւ, մնացած փողի եօթերորդ մասով տետրակները, և ինչ որ մնաց, նրա էլ երրորդ մասով միրգ։ Էլի ի՞նչքան փող մնաց իրեն։

310. Պղնձագործը 10 թերթ պղինձ ուներ՝ իւրաքանչիւրը 9 գրվանքա։ Այդ պղնձի երրորդ մասից նա շինեց 10 հատ թաբախ, իսկ մնացածի կէսից երեք հատ ինքնաեռ։ Ի՞նչքան էր ամեն մի ինքնաեռի և թաբախի քաշը։

311. Յանուէպանը 2 փութ նաւթ ուներ. մէկկին ծախեց այդ նաւթի չորրորդ մասը, միւսին մնացածի երրորդ մասը։ Ինչ որ մնաց, այն էլ ածեց 20 գրվանքանոց ամաններըի մէջ։ Քա՞նի ման լցրեց նա։

312. Մի ամբարում 100 չեռվերտ ցորեն կայ, իսկ միւսում 60 չեռվերտ. առաջին ամբարից ծախեցին այնտեղ եղածի հինգերորդ մասը, իսկ երկրորդ ամբարից երրորդ մասը։ Քա՞նի չեռվերտ ցորեն ծախեցին 2 ամբարից։

313. Մրգավաճառը մի մարդու ծախեց 10 գրվանքա տանձ, միւսին առաջինից 20 գրվանքա աւելի, իսկ երրորդին՝ առաջինին և երկրորդին ծախածից 2 անգամ աւելի։ Քա՞նի գրվանքա տանձ ծախեց նա երրորդ մարդուն։

314. Տանտիկինն առաւ 2 բադ և իւրաքանչիւրին վճարեց 50 կոպէկ. էլի առաւ մի քանի հատ վառիկ՝հատը 20 կոպէկով։ Նա քա՞նի վառիկ առաւ, եթէ վառիկներին վճարեց բադերից 40 կոպէկ պակաս։

315 Վաճառականը ծախեց 3 սեխ՝ հատը 30 կոպէկով, և մի քանի հատ ձմերուկ՝ հատը 20 կոպէկով։ Նա ի՞նչքան ձմերուկ ծախեց, եթէ այդ ձմերուկների համար նա ստացաւ սեխերի համար ստացած փողից 10 կոպէկ պակաս։

III. ԽՆԴԻՐՆԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԻՒՐԵՒԻ ԹՈՒԵՐԻ ԳՐՔԸՆՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ

316. Հաւ ծախողը ծախեց 40 սագ և 8 բադ։ Նա քա՞նի թև թռչուն ծախեց։

317. Դաշտում աշխատում էին 20 կին, յետոյ էլի աւելացան 7 կին։ Այժմ քա՞նի կին է աշխատում դաշտում։

318. Զինորսը որսաց 20 հատ կապուտ ձուկ, 30 հատ մուրծայ. ընդամենը քա՞նի ձուկ որսաց նա։

319. Կառապանն առաջին օրն անցաւ 80 վերստ, իսկ երկրորդ օրը տասնևհինգ վերստ առաջին օրուանից աւելի։ Նա քա՞նի վերստ անցաւ երկրորդ օրը։

320. Մի կին առաւ 42 կոպէկի չիթ և 55 կոպէկի թէյ։ Ի՞նչքան փող ծախսեց նա։

321. Ուսումնարանում ուսանում են 37 աղայ և 13 աղջիկ։ Քա՞նի երեխայ է սովորում ուսումնարանում։

322. Գիւղացին մի մարգագետնում հարեց 33 փութ խոտ, իսկ միւսում 38 փութ։ Քա՞նի փութ խոտ հարեց նա երկու մարգագետիններում։

323. Մի կողով մոշը ծախուեց 8 կոպէկով, իսկ միւս կողովը 9 կոպէկով։ Ո՞րքան փող ստացուեց երկու կողովի վաճառումից։

324. Ծառուղու մի կողմում տնկած է 17 լորենի, իսկ միւս կողմում 26։ Քա՞նի լորենի կայ այդ ծառուղում։

325. Մի տեղից հնձեցին 16 խուրձ, իսկ միւս տեղից 57։ Քա՞նի խուրձ հնձեցին երկու տեղից։

326. Ծոհարարուհին ծախսեց 26 կոպէկ, և իրեն էլի մնաց 38 կոպէկ։ Քանի կոպէկ ունէր նա։

327. Երեխան խանութում առաւ 36 կոպէկի գիրք և երբ իր մօտ եղած սպիտակ փողը վճարեց, նրան մանրափող տուին 14 կոպէկ։ Քանի կոպէկանոց էր տուել նա։

328. Կապալառուն վարձեց 3 խումբ մշակներ. առաջին խմբում կար 16 մարդ, երկրորդում 28, իսկ երրորդում՝ 17։ Քանի մարդ վարձեց նա։

329. Մի մարգագետնում 47 դէզ խոտ կայ, իսկ միւսում՝ 18 դէզ առաջինից աւելի։ Քանի դէզ կայ երկրորդ մարգագետնում։

330. Հայրը ամսական աշխատում է 45 մանէթ, որդին 27 մանէթ, իսկ աղջիկը 15 մանէթ։ Քանի մանէթ են աշխատում բոլորը միասին։

331. Բազազը ծախեց 28 արշին չիթ և չիթից 27 արշին աւելի քաթան։ Քանի արշին քաթան ծախեց նա։

332. Կալուածատէրը գնեց մի կալուածք, որի մէջ 37 դեսեատին վարելահող էր և վարելահողից 24 դեսեատին աւելի անտառ էր։ Քանի դեսեատին անտառ գնեց և քանի դեսեատին էր բոլոր կալուածքը։

333. Մի ամբարում կար 25 չետվերտ ցորեն, իսկ միւսում՝ 49 չետվերտ աւելի։ Ընդամենը քանի չետվերտ ցորեն կար երկու ամբարում։

334. Կալուածատէրը 18 կով ունէր և կովերից 15-ով աւելի ոչխար։ Քանի ոչխար ունէր կալուածատէրը։

335. Դերձակուհին մի շրջազգեստ կարելու համար գործածեց 16 արշին չիթ, իսկ միւսի համար 17 արշին։ Քանի արշին չիթ ունէր նա։

336. Քոյր և եղբայր գումարեցին իրենց ունեցած փողը և նրանով առան մի խրճիկ. եղբայրն ունէր 25, իսկ քոյրը 15 կոպէկ։ Ո՞րքան արժէր խրճիկը։

337. Գործարանում աշխատում էին 23 տղամարդ և դրանցից 9-ով աւելի կին։ Քանի մարդ էր աշխատում գործարանում։

338. Մրգավաճառն առաւ 48 կոպէկի խնձոր և 25 կոպէկի տանձ։ Այդ խնձորն ու տանձը ծախեց և մէջն աշխատեց 23 կոպէկ։ Նա ինչքան փող ստացաւ այդ վաճառումից։

339. Որսորդը ծախեց 15 մշահաւ, մշահաւերից 8-ով աւելի կաքաւ և կաքաւներից 12-ով աւելի լոր։ Քանի լոր ծախեց նա։

340. Զարչին առաւ 18 մանէթով կով և 39 մանէթով ձի։ Կովը ծախեց և մէջն աշխատեց 7 մանէթ, իսկ ձին ծախելուց աշխատեց 14 մանէթ։ Քանիսով ծախեց կովն ու ձին։

341. Գիւղից մի մարդ ոտով ճանապարհ ընկաւ դէպի քաղաք։ Առաջին օրը նա անցաւ 24 վերստ, երկրորդ օրը 40 վերստ ճանապարհ։ Ո՞րքան է այդ գիւղի հեռաւորութիւնը քաղաքից։

Հ Ա Ն Ո Ւ Մ Ն

342. Հայրը 55 տարեկան է, իսկ մայրը 8 տարով հօրից փոքր է։ Քանի տարեկան է մայրը։

343. Պարտիզում 60 ծառ կար։ Փոթորկից 8 ծառ կոտրուեց։ Քանիսը մնաց ողջ։

344. Հաւ ծախողն ունէր 60 հատ հաւ. դրանցից 36 հատ ծախեց։ Քանիսը մնաց։

345. Երեխաները անտառում հաւաքեցին 38 գրվանքա մորի, որից 19 գրվանքան ծախեցին։ Քանի գրվանքա մորի մնաց նրանց։

346. Այգում 53 տանձենի կայ և տանձենիներից 17-ով պակաս խնձորենի։ Քանի խնձորենի կայ այնտեղ։

347. Գիւղացին 38 գրվանքա իւղ ունէր։ 18 գըրվանքան ծախեց։ Ի՞նչքան իւղ մնաց նրան։

348. կալուածատէրը 87 ոչխար ունէր, որից 28-ը ծախեց։ Քանի ոչխար մնաց նրան։

349. Դերձակը 84 արշին մահուդ ունէր։ 38 արշինից նա վերարկուներ կարեց և 15 արշինից բաճկոններ։ Քանի արշին մահուդ մնաց։

350. Գիւղացին պիտի անցնէր 94 վերստ։ 45 վերստ անցաւ։ Էլի քանի վերստ է մնում նրան անցնելու։

351. Յանուէպանին ապրանքը նստել էր 87 կոպէկ։ Նա ինչքանով ծախեց այդ ապրանքը, եթէ մէջը վնաս արաւ 18 կոպէկ։

352. 100 վեդրօ ջուր կար. այդտեղից 86 վեդրօ դուրս թափեցին։ Քանի վեդրօ մնաց այնտեղ։

353. Հաւ ծախողը 90 կոպէկով մի հաւ առաւ. հաւը նա ծախեց և միաս արաւ 14 կոպէկ։ Քանի կոպէկով ծախեց հաւը։

354. Գործարանում աշխատում էին 76 տղամարդ և 59 կին։ Տղամարդիկ կանանցից քանիսով էին աւելի։

355. Երկու վաճառական փոխեցին իրենց ապրանքները. մէկը տուեց 85 մանէթի մահուդ, իսկ միւսը 78 մանէթի թէյ։ Նրանցից ո՞րը ինչքան փող պիտի տայ միւսին, որ հաւասար լինին։

356. Գիւղացուն առաջարկում էին ծախել ձին 84 մանէթով. նա այդ ձին քաղաք բերեց և ծախեց 78 մանէթով. քանի մանէթ վնաս արաւ նա։

357. Յանուէպանը ձմերուկներ առաւ 96 կոպէկով

և 29 կոպէկ վնասով ծախեց։ Քանի կոպէկով ծախեց նա ձմերուկները։

358. Պղնձագործը առաւ հին ինքնաեռներ 64 մանէթով և ծախեց 87 մանէթով։ Ի՞նչքան փող աշխատեց մէջը։

359. Բանուորը 100 մանէթով վարձուեց մի կալուածատիրոջ մօտ։ Դուրս գալիս ստացաւ 63 մանէթ փող և մի կով։ Ի՞նչ արժէր կովը։

360. Տանտիկինը մի մանէթ ունէր. 45 կոպէկի միս գնեց և դրանից 28 կոպէկ պակաս տուեց մի բաժակի։ Ի՞նչքան մանրավաճառ յետ բերեց նա մանէթից,

361. կալուածատէրն ստացաւ 82 չետվերտ ցորեն և 76 չետվերտ գարի. ցորենից նա ծախեց 45 չետվերտ, իսկ գարուց 18 չետվերտ պակաս։ Ինչից նրան աւելի մնաց և ինչքանով։

362. Գիւղացին մի ձի ծախեց 85 մանէթով։ Եթէ 15 մանէթ աւելով ծախած լինէր նա այդ ձին, մէջն աշխատած կը լինէր 39 մանէթ։ Ի՞նչ արժէր նրան այդ ձին և ինչքան աշխատեց մէջը։

ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ԵՒ ՀԱՆՈՒՄՆ

363. Ո՞ր թիւը պիտի շատացնենք 28-ով, որ ստանանք 75. 37-ով, որ ստանանք 84. 48-ով, որ ստանանք 100։

364 Ո՞ր թիւը պիտի պակասացնենք 54-ով, որ ստանանք 18. 37-ով, որ ստանանք 25. 25-ով, որ ստանանք 39։

365. Ո՞րքան պիտի աւելացնենք 54-ին, որ ստա-

նանք 100. 67-ին, որ ստանանք 95. 24-ին, որ ստանանք 90։

366. Ո՞րքան պիտի պակսեցնենք 72-ից, որ ստանանք 17. 94-ից, որ ստանանք 28։

367. Այգում 76 խնձորենի կայ և 100 տանձենի։ Առնամանիքներից փչացաւ 36 խնձորենի և 48 տանձենի։ Քանի պտղատու ծառ մնաց այգում։

368. Դինեվաճառը ջրից և սպիրտից 100 վեդրօ խառնուրդ կազմեց։ Նա 15 վեդրօ ջուր վերցրեց։ Խառնուրդի մէջ սպիրտը քանի վեդրոյով աւելի էր ջրից։

369. Դիւղացին ծախեց 27 մանէթի խոտ և 48 մանէթի ցորեն. ստացած փողով առաւ մի ձի և մի կով։ Ձիուն տուեց 43 մանէթ։ Ո՞րքան էր տուել կովին։

370. Սեղանը, բազմոցը և պահարանը միասին արժեն 100 մանէթ։ Սեղանը արժէ 45 մանէթ, իսկ բազմոցը 16 մանէթով սեղանից պակաս։ Ո՞րքան արժէ պահարանը։

371. Ճանապարհորդը գիւղից քաղաք հասաւ 3 օրում։ Առաջին օրը նա անցաւ 26 վերստ աւելի, իսկ երկրորդ օրը առաջինից 14 վերստ աւելի, իսկ երրորդ օրը 12 վերստ երկրորդ օրից պակաս։ Քանի վերստ է գիւղից մինչև քաղաք։

372. Գրքերի պահարանում գրքերը դասաւած են 2 շարք՝ ներքևի շարքում 35 գիրք, իսկ վերևի շարքում 58։ Այդ գրքերից 48 հայերէն է, իսկ մնացածը ռուսերէն։ Քանի ռուսերէն գիրք կայ այնտեղ։

373։ Կալուածատէրը 98 դեսեատին հող ունէր։ 44 դեսեատինը վարելահող էր և դրանից 18 դեսեատին պակաս արօտատեղի, մնացածն էլ անտառ։ Քանի դեսեատին անտառ ունէր նա։

374. Դերձակը 3 կտոր քաթան ունէր. առաջինը կտորը 45 արշին էր, երկրորդը 8 արշին առաջինից պակաս, իսկ երրորդը 17 արշին երկրորդից աւելի։ Նա

երրորդ կտորից կտրեց 28 արշին։ Քանի արշին մնաց այդ կտորում։

375. Աշակերտն առաւ 2 գիրք՝ մէկը 25 կոպէկով, իսկ միւսը 49 կոպէկով։ Այդ գրքերը նա ծախեց 55 կոպէկով։ Քանի կոպէկ ինքս արաւ նա։

376. Մանրավաճառն առաւ մի կողով կեռաս 80 կոպէկով և մի կողով թուէթ 75 կոպէկով։ Կեռասը ծախեց մի մանէթով, իսկ թուէթը 64 կոպէկով։ Առուտուրից նա քանչքան օգուտ ստացաւ։

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

377. Ո՞րքան կը ստանանք, եթէ 2-ը կրկնենք 6, 7, 8, 10, 30, 50 անգամ։

378. Բազմապատկեցէք 5-ը, 7-ը, 8-ը, 9-ը, 20-ը, 40-ը 2 անգամ։

379. Շատացրէք 3 անգամ՝ 5-ը, 7-ը, 8-ը, 9-ը, 10-ը, 20-ը, 30-ը։

380. Վերցրէք 4 անգամ 5-ը, 7-ը, 9-ը, 20-ը։

381. Քանի անգամ պիտի վերցնենք 7-ը, որ ստանանք՝ 56, 35, 63, 28, 70։

382. Քանի օր ունի 6, 7, 8, 9 շաբաթը։

383. Քանի թերթ կը լինի 3, 4 դաստայ թուղթը։ Քանի դաստայ կը լինի 5, 4 օզման։

384. Քանի վերշոկ ունի 3, 4, 5, 6 արշինը։

385. Քանի ժամ է 4, 3, 2 օրը։

386. Մի չեռվերիկը ունի 8 գարնց, քանի գարնց ունի 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 չեռվերիկը։

387. Տունը լուսաւորելու համար շաբաթական գործ

են ածում 4 գրվանքա հինգանոց մոմ։ Քանի գրվանքա հինգանոց մոմ բաւական կը լինի 3 շաբաթում։

388. Միհակի արշինն արժէ 12 կոպէկ, իսկ քաթանինը 2 անգամ աւելի։ Ի՞նչքան կը արժենայ 3 արշին քաթանը։

389. Մրգավաճառը ծախեց 8 գրվանքա մորի՝ գրվանքան 7 կոպէկով։ Նա ինչքան փող ստացաւ։

390. Ձին արժէ 24 մանէթ։ Ի՞նչ արժէ 4 ձին։

391. Մի գիւղացի վերցրեց 27 չեռվերտ գարի, իսկ միւսը 3 անգամ աւելի։ Քանի չեռվերտ գարի վերցրեց երկրորդ գիւղացին։

392. Կալուածատէրը ցանեց 5 դեսեատին հող. ամեն մի դեսեատինից վերցրեց 15 չեռվերտ ցորեն։ Քանի չեռվերտ ցորեն ստացաւ նա։

393. Շաքարի գրվանքան արժէ 17 կոպէկ։ Ո՞րքան պիտի վճարել 5 գրվանքա շաքարին։

394. Որդին 3 տարեկան է. հայրը 12 անգամ մեծ է որդուց։ Քանի տարեկան է հայրը։

395. Փայտի սաժէնն արժէ 7 ռուբլի։ Ո՞րքան պիտի վճարել 5, 6, 7, 8, 9 սաժէն փայտին։

396. Հացի գրվանքան արժէ 3 կոպէկ։ Ո՞րքան պիտի վճարել 21, 23, 25, 27 գրվանքա հացին։

397. Վաճառականը 16 արկղ խնձոր առաւ. ամեն մի արկղում կար 3 փութ։ Նա քանի փութ խնձոր առաւ։

398. Մահուդի արշինն արժէ 3 մանէթ։ Ո՞րքան պիտի վճարել 24 արշինին։

399. Երկրագործը կասեց 16 դէզ ցորեն. ամեն մի դէզից դուրս եկաւ 5 չեռվերտ։ Քանի չեռվերտ ցորեն դուրս եկաւ բոլոր դէզերից։

400. Մշակը ամսական ստանում է 7 մանէթ։ Քանի մանէթ կը ստանայ նա 5, 6, 7, 8, 9, 10 ամսում։

401. Քանի քառորդ ունի 6, 7, 8 արշինը։

402. Քանի արշին ունի 7 սաժէնը։

403. Ծոտի փութն արժէ 8 կոպէկ, իսկ գարին 6 անգամ խոտից թանգ է։ Ի՞նչ արժէ 2 փութ գարին։

404. Պահեստում 3 տակառ գինի կայ, ամեն մի տակառում 7 վեդրօ։ Այդ բոլոր գինին ծախեցին՝ վեդրօն 3 մանէթով։ Ի՞նչքան փող ստացան։

405. Մշակը շաբաթուայ ընթացքում բանում է 6 օր և օրէնն ստանում է 7 մանէթ։ Ո՞րքան կը ստանայ նա 2 շաբաթուայ ընթացքում։

406. Անիւի շրջապատը 19 վերշոկ է։ Ի՞նչքան տեղ կ՚անցնի նա, եթէ պտոյտ գայ 4 անգամ։

407. Մի տակառում կայ 6 վեդրօ գինի, միւսում երեք անգամ առաջնից աւելի, իսկ երրորդում առաջնից և երկրորդից 2 անգամ աւելի։ Քանի վեդրօ գինի կայ բոլոր 3 տակառներում։

408. Մի մարդ երկուշաբթի առաւօտը գիւղից ոտով ճանապարհ ընկաւ դէպի քաղաք և տեղ հասաւ հինգշաբթի երեկոյեան։ Քանի վերստ է գիւղից մինչև քաղաք, եթէ այդ մարդը օրական անցնում էր 24 վերստ։

409. Գիւղացին 25 վերստ ճանապարհ գնաց և հաշուեց, որ ինքն անցել է ճանապարհի երրորդ մասը։ Քանի վերստ է ամբողջ ճանապարհը։

410. Կալուածատէրը ծախեց 18 փութ ցորեն։ Ծախած ցորենը նրա ունեցած բոլոր պաշարի հինգերորդ մասն էր։ Ի՞նչքան ցորեն ունէր նա։

411. Տանտիկինը քաթանից 3 շապիկ կարեց՝ ամեն մի շապկի վրայ գործածելով 6 արշին։ Քանի արշին քաթան ունէր նա, եթէ շապիկների համար գործածեց իր ունեցած բոլոր քաթանի չորրորդ մասը։

412. Երկրագործը 12 փութ կորեկ ցանեց և ստացաւ մէկին-եօթը։ Քանի փութ կորեկ ստացաւ նա։

413. Ծոտի փութն արժէ 13 կոպէկ, իսկ գարին 7 անգամ խոտից թանգ է։ Ի՞նչ արժէ գարու փութը։

414. Գիւղացին ոտով 6 վերստ անցաւ, իսկ ձիով 14 անգամ աւելի։ Քանի վերստ անցաւ նա ձիով։

415. Ոչխարն արժէ 4 մանէթ, իսկ ձին 12 անգամ ոչխարից թանգ։ Քանի մանէթ արժէ ձին։

416. Մահուդի արշինն արժէ 4 մանէթ։ Ո՞րքան պիտի վճարել 24 արշին մահուդին։

417. Մի մատիան արժէ 3 կոպէկ։ Ո՞րքան պիտի վճարել 2 դիւժին մատիտին։

418. Կալուածատէրը ծախեց 29 փութ բուրդ։ Ծախած բուրդը նրա ունեցած բրդի երրորդ մասն էր։ Քանի փութ բուրդ ունէր նա։

419. Մանրավաճառը ծախեց 23 փութ ալիւր։ Այդ ալիւրը նրա ունեցած բոլոր ալիւրի չորրորդ մասն է։ Ի՞նչքան ալիւր ունէր նա։

420. Մի բանուոր շաբաթական աշխատում է 3 մանէթ, իսկ միւսը 3 անգամ նրանից աւելի։ Ո՞րքան կաշխատի նրանցից իւրաքանչիւրը 6 շաբաթում։

421. Կալուածատէրն ունէր չորս ձի, 3 անգամ աւելի կով, կովերից 4 անգամ աւելի ոչխար։ Քանի ոչխար ունէր նա։

422. Գիւղացին 8 փութ ցորեն ունէր և վեց անգամ աւելի գարի։ Գարու փութը ծախեց 2 մանէթով։ Ի՞նչքան փող ստացաւ նա։

423. Երկու շաբաթ մի տեղ բանում էին 8 հիւսն և 4 տաղտկագործ։ Իւրաքանչիւր հիւսնը շաբաթէնը ստանում էր 2 մանէթ, իսկ տաղտկագործը 3 անգամ հիւսնից աւելի։ Ո՞րքան փող կը ստանան նրանք այդ շաբաթում։

ԲԱԺԱՆՈՒՄՆ

424. 2 հաւասար մասի բաժանեցէք 12-ը, 16-ը, 24-ը, 32-ը, 48-ը, 60-ը, 80-ը։

425. Պակասացրէք 4 անգամ՝ 16-ը, 24-ը, 28-ը, 32-ը, 48-ը, 56-ը, 64-ը։

426. Պակասացրէք 5 անգամ՝ 20-ը, 35-ը, 40-ը, 50-ը, 100-ը,

427. 8-ը քանի անգամ է պարունակւում 24-ի, 32-ի, 40-ի, 48-ի, 56-ի մէջ։

428. Մրգավաճառը խնձորի գրվանքան ծախում էր 2 կոպէկով։ Նա ծախեց 36 կոպէկի խնձոր։ Քանի գրվանքա խնձոր ծախեց նա։

429. Ուռհարարը 8 գրվանքա միս առաւ և վճարեց 56 կոպէկ։ Ի՞նչ արժէր մսի գրվանքան։

430. Երկրագործը հաւաքեց 45 փութ ցորեն և 9 անգամ դրանից պակաս գարի։ Քանի փութ գարի հաւաքեց նա։

431. Դասարանում 56 աշակերտ կայ, որ հաւասարապէս նստած են 8 նստարանների վրայ։ Քանի աշակերտ է նստած ամեն մի նստարանի վրայ։

432. Երկրագործը 3 օրավար հողում ցանեց 25 փութ ցորեն հաւասարապէս։ Ո՞րքան փութ ցանեց նա ամեն մի օրավարում։

433. Մի փութը 40 գրվանքա է։ Քանի օր կը բաւականանայ մի փութ աղը, եթէ օրական գործ ածենք 4 գրվ.

434. 6 արշին չթին վճարեցին 54 կոպէկ։ Ո՞րքան արժէ մի արշինը։

435. Մրգավաճառը 96 կոպէկով 4 ձմերուկ առաւ. ո՞րքան վճարեց մի ձմերուկին։

436. Լուացարարը 3 օր աշխատելու համար ստացաւ 96 կոպէկ։ Օրական քանի կոպէկ էր ստանում նա։

437 Աշակերտը մի դիւժին մատիտ վճարեց 48 կոպէկ։ Ի՞նչ արժէ մի մատիտը։

438. Այգեպանը 72 ծառ տնկեց շարքերով՝ ամեն մի շարքում 24 ծառ։ Քանի շարք դուրս եկաւ։

439. Աշակերտը 17 օրուայ ընթացքում նախաճաշի համար ծախսեց 51 կ.։ Օրէնը քանի կոպէկ էր ծախսում նա։

440. Նախրում 57 կով կար և 19 ոչխար։ Կովերի թիւը քանի անգամ աւելի էր ոչխարներից։

441. Կառապանը առաւ 91 փութ խոտ։ Քանի շաբաթ բաւական կը լինի այդ խոտը նրա ձիաներին, եթէ շաբթէնը բանացնի 13 փութ։

442. 5 գրվանքա ձէթին վճարեցին 75 կոպ.։ Քանի գրվանքա այդպիսի ձէթ կարելի է առնել 90 կոպէկով։

443. Տանձի տասնեակն արժէ 8 կոպէկ։ Քանի տասնեակ տանձ կարելի է առնել 80 կոպէկով։

444. Մի խումբ մշակները մի գործ կարող են վերջացնել 36 օրում, իսկ մի ուրիշ խումբ նոյն գործը կարող է վերջացնել 6 անգամ աւելի շուտ։ Քանի օրում կը վերջացնի երկրորդ խումբը այդ գործը։

445. Երկու գիւղացի ցորեն բերին քաղաք ծախելու։ Նրանցից մէկը ծախեց 9 չեռվերտը 45 մանէթով, իսկ միւսը 7 չեռվերտը 42 մանէթով։ Նրանցից ո՞րը աւելի թանգ ծախեց ցորենը և ի՞նչքանով թանգ։

446. Երկրագործը իր ցորենի դէզը կասեց և ստացաւ 54 չեռվերտ. հաշուեց, որ ստացել է մէկին-վեց։ Քանի չեռվերտ ցորեն էր ցանել նա։

447. Մի մարդ 72 մանէթ ունէր. այդ փողի իննեերորդ մասով առաւ գլխարկ, իսկ չորրորդ մասով զգեստ։ Ի՞նչ տուեց գլխարկին և զգեստին։

448. Մի մշակ մի գործ վերջացնում է 36 օրում։ Քանի օրում կը վերջացնեն նոյն գործը 9 մշակը։

449։ Մի դիւժին ոսկի մատանիներին վճարեցին 84 մանէթ։ Ի՞նչքան արժէ մի մատանին։

450. Մի անիւ 8 րոպէում պտտում է 64 անգամ, իսկ միւսը նոյնքան պտոյտը կատարում է 16 րոպէում։ Քանի պտոյտ է անում ամեն մի անիւը մի րոպէում։

451. 9 հաւասար տոպրակ ալիւրը քաշում է 81 փութ։ Ի՞նչքան ալիւր կայ ամեն մի տոպրակի մէջ։

452. Մի գրվանքան 96 մսխալ է։ Քանի մսխալ է՝ քառորդ գրվանքան, կէս գրվանքան, մի ութերորդ գըրվանքան։

453. Ջրաղացպանը 100 փութ ալիւր ունէր։ Այդ ալիւրի չորրորդ մասը ծախեց 25 մանէթով։ Քանիսո՞վ էր ծախել նա ալիւրի փութը։

454. Դերձակուհին առաւ կէս թոփ չիթ և նրանից կարեց մի քանի բաճկոնակ, ամեն մի բաճկոնակի վրայ գործ ածելով 6 արշին։ Նա քանի բաճկոնակ կարեց, եթէ թոփը 48 արշին է։

455. Ալիւրի փութը 72 կոպէկ արժէ, իսկ գետնախնձորի փութը 12 կոպէկ։ Ալիւրը քանի անգամ թանգ է գետնախնձորից։

456. Մանէթը քանի շահի է, քանի տասկոպէկանոց, քանի աբասի։

ԽՆԴԻՐՆԵՐ ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՈՎ

457. Քանի անգամ պիտի շատացնենք 15-ը, որ ստանանք 90. 17-ը, որ ստանանք 85. 16-ը, որ ստանանք 48. 14-ը, որ ստանանք 98։

458. Քանի անգամ պիտի քչացնենք 45-ը, որ ստանանք 15. 64-ը, որ ստանանք 8. 72-ը, որ ստանանք 12. 95-ը, որ ստանանք 19-ը։

459. Ո՞ր թիւը պիտի մեծացնենք 7 անգամ, որ ստանանք 63. 12 անգամ, որ ստանանք 60. 15 անգամ, որ ստանանք 75. 8 անգամ, որ ստանանք 96։

460. Ութը ո՞ր թուի չորրորդ, ութերորդ, հինգերորդ եօթներորդ, տասներկուերորդ մասն է կազմում։

461. Վեց արշին մահուդին վերցրին 42 մանէթ։ Ո՞րքան պիտի վճարել 5 արշինին, 7 արշինին, 9 արշինին, 12 արշինին։

462. Ութ գրվանքայ ալիւրն արժէ 32 կոպէկ։ Ո՞րքան պիտի վճարեն 6 գրվ., 7 գրվ., 14 գրվ., 17 գրվ. 20 գրվանքա ալիւրին։

463. Փայտի պահեստում կար 64 սաժէն հաճարի փայտ և 8 անգամ դրանից պակաս ղաժի փայտ։ Բոլոր ղաժի փայտը ծախեցին սաժէնը 9 մանէթով։ Ի՞նչքան փող ստացան ծախած փայտի համար։

464. Որդին հօրից ստացաւ 3 հատ 15 կոպէկանոց և 2 հատ 25 կոպէկանոց։ Այդ փողով նա առաւ մատիտներ՝ հատը 5 կոպէկով։ Քանի մատիտ առաւ նա։

465. Մեղուապահն ունէր 16 փեթակ. ամեն մի փեթակից հանեց 4 գրվանքա մեղր և այդ բոլոր մեղրը տեղաւորեց 8 ամանի մէջ հաւասարապէս։ Քանի գրվանքա մեղր ածեց ամեն մի ամանը։

466. Բանուորը ամսական ստանում էր 5 մանէթ։ Տարի ու կէս ծառայելուց յետոյ նա իր ռոճիկն ստացաւ և դուրս եկաւ այնտեղից։ Քանի ամիս կը բաւականանայ նրան այդ փողը, եթէ ամսական ծախսելու լինի 15 մանէթ։

467. Վաճառականն ունէր 14 տոպրակ առաջին տեսակի ալիւր, իւրաքանչիւր տոպրակը 4 փթանոց, և 8 տոպրակ երկրորդ տեսակից՝ իւրաքանչիւր տոպրակը 5

փթանոց։ Նա այդ ալիւրը ամբարից խանութ տանելիս բարձեց սայլերի վրայ՝ ամեն մէկի վրայ 24 փութ։ Քանի սայլի վրայ բարձեց նա։

468. Հայրը 100 մանէթ ունէր. այդ փողի չորրորդ մասը տուեց աղջկան և հինգերորդ մասը տղին։ Նրանցից ո՞վ աւելի ստացաւ և ի՞նչքանով։

469. Թէյ ծախողը 13 փութ՝ փութը 6 մանէթանոց շաքարը փոխեց թէյի հետ, որի գրվանքան 3 մանէթ արժէր։ Քանի գրվանքա թէյ ստացաւ նա։

470. Գիւղացին փոխեց 3 գրվանքա սունկը, որի գրվանքան արժէր 30 կոպէկ, 6 արշին չթի հետ։ Ի՞նչ արժէր չթի արշինը։

471. Պղնձագործը առաւ 4 թիթեղ պղինձ՝ իւրաքանչիւրը 18 գրվանքանոց։ Այդ պղնձից նա 9 գրվանքանոց կաթսաներ շինեց։ Ի՞նչքան փող կստանայ նա այդ կաթսաների վաճառումից, եթէ հատը ծախէ 7 մանէթով։

472. Մրգավաճառը 56 կիտրոն ունէր։ Այդ կիտրոնների չորրորդ մասը ծախեց՝ հատը 3 կոպէկով։ Ի՞նչքան փող ստացաւ։

473. Գիւղացին առաւ մի կով, մի ձի և մի ոչխար։ Կովին տուեց 36 մանէթ, ոչխարին 6 անգամ կովից պակաս, իսկ ձիուն 15 անգամ ոչխարից աւելի։ Ի՞նչ արժէր ձին։

474. Հոյրը կարդաց 96 երես ունեցող գրքի կէսը. իսկ եղբայրը 72 երես ունեցող գրքի վեցերորդ մասը։ Հոյրը քանի՞ անգամ եղբօրից աւելի կարդաց։

475. 25 գրվանքա կտուահատից դուրս է գալիս 4 գրվ. ձէթ։ Ի՞նչքան ձէթ դուրս կը գալ 2 չեփվերիկ սերմից, եթէ ամեն մի չեփվերիկը քաշում է 50 գրվանքա։

476. Մրգավաճառը մէկ ու կէս դիւժին խնձորը առաւ 36 կոպէկով, իսկ վինքը ծախեց 90 կոպէկով։ Ի՞նչքան աշխատեց ամեն մի խնձորուժ։

477. Մրգավաճառը տուեց 12 նարինջ և դրա փոխա-

ըէն ստացաւ տանձ։ Քանի տանձ ստացաւ նա, եթէ մի տանձը արժէ 6 կոպէկ, իսկ մի նարինջը 8 կոպէկ։

478. Երկու գիւղացի ցորեն բերին քաղաք՝ վաճառելու. մէկը ծախեց 3 չեռվերտը 27 մանէթով, իսկ միւսը 5 չեռվերտը 45 մանէթով։ Նրանցից ո՞րն աւելի թանգ ծախեց։

479. Պղնձագործը 60 գրվ. պղինձ ունէր. այդ պղնձից նա շինեց 3 ինքնաեռ՝ հատը 12 գրվ., և մի քանի կաթսայ՝ հատը 6 գրվ. Քանի կաթսայ շինեց նա։

480. Մի մարդ առաւ 2 արկղ 5-անոց մոմ. ամեն մի արկղում կար 10 գրվանքա։ Քանի օր բաւական կը լինի այդ մոմը, եթէ օրէնը գործածելու լինին 4 հատ մոմ։

481. Ճանապարհորդը գիւղից քաղաք էր գնում. նա իւրաքանչիւր ժամում անցնում էր 7 վերստ, և 6 ժամ այդպէս գնալով անցաւ բոլոր ճանապարհի կէսը։ Քանի վերստ է գիւղից մինչև քաղաք։

482. Երկրագործը ցանեց 9 չեռվերտ ցորեն և 4 չեռվերտ գարի. ցորենը տուեց մէկին-ութ, իսկ գարին մէկին-վեց։ Ստացած ցորենը քանի անգամ աւել էր գարուց։

483. Մի արկղ խնձոր առան. այդ խնձորի ութերորդ մասը ծախեցին, իսկ հինգերորդ մասը, փչացած լինելով, դէն ածեցին։ Քանի խնձոր կար արկղում և քանի հատ ծախեցին, եթէ դէն էին ածել 16 խնձոր։

484. Մի քանի օրավար հողից մէկին-8 հունձ ստանալով, գիւղացին հաւաքեց 96 փութ կտուահատի սերմ։ Քանի օրավար էր ցանքսը, եթէ ամեն մի օրավարում ցանել էին 6 փութ սերմ։

485. Վաճառականն 100 մանէթով 5 սաժէն ղաժի փայտ առաւ ու մի քանի սաժէն հացի փայտ։ Ղաժի փայտի սաժէնն արժէր 9 մանէթ, իսկ հացի փայտը 4 մանէթով էժան էր ղաժի փայտից։ Քանի սաժէն հացի փայտ առաւ նա։

486. Վաճառականն առաւ մի տակառ իւղ, որն իր

ամանով քաշում էր 15 գրվանքա։ Ո՞րքան վճարեց նա այդ իւղին, եթէ գրվանքան արժէր 11 կոպէկ, իսկ դատարկ ամանի քաշն էր 6 գրվանքա։

487. Մանրավաճառը 13 տոպրակ ալիւրին վճարեց 52 մանէթ, իսկ ինքը իւրաքանչիւր տոպրակը ծախում էր 7 մանէթով։ Ի՞նչքան աշխատեց նա։

488. Գիւղացին ուզում էր 4 գրվանքա ձէթ առնել, գրվանքան 15 կոպէկով, և 3 գրվանքա շաքար, գրվանքան 13 կոպէկով։ Յետոյ միտքը փոխեց և այդ փողով արշինն 9 կոպէկով չէթ առաւ։ Նա քանի արշին չէթ առաւ։

489. Մի մարդ 72 ոչխար ունէր, 3 անգամ նրանցից պակաս կով և 36-ով պակաս հորթ։ Նա քանի կով և հորթ ունէր։

490. Մի մարդ 96 մանէթ վճարեց և 16 արշին սև ու 8 արշին կապոյտ մահուդ առաւ։ Սև մահուդի արշինն արժէր 3 մանէթ. ի՞նչ արժէր կապոյտ մահուդի արշինը։

491. Իւրաքանչիւր ձին օրական 3 գարնց գարի է ուտում։ Քանի ձիու բաւական կը լինի մի շաբաթուայ ընթացքում 84 գարնցը։

492. Մանրավաճառը 15 փութ շաքար ծախեց՝ փութը 6 մանէթով, իսկ ինքն առել էր փութը 4 մանէթով։ Այդ շաքարի մէջ նա որքան փող աշխատեց։

493. Ես և եղբայրս միասին 70 մանէթ ունենք։ Մենք հաւասարապէս ծախսեցինք և դրանից յետոյ ինձ մօտ մնաց 18 մանէթ, իսկ եղբօրս մօտ 16 մանէթ։ Ի՞նչքան փող ունէի ես և ի՞նչքան եղբայրս։

494. Երկրագործը 96 փութ ցորեն ու գարի ունէր։ Երբ որ նա հաւասար քանակութեամբ ցորեն ու գարի ծախեց, մնաց 15 չեռվերտ ցորեն և 27 չեռվերտ գարի. Նա քանի չեռվերտ ցորեն ունէր և քանի չեռվերտ գարի։

495. Խոհարարն իր ունեցած փողի վեցերորդ մասը տուեց կանաչեղէնի, իսկ չորրորդ մասը մսի։ Նա մսին

քանի կոպէկ աւելի տուեց, եթէ կանաչուն տուել էր 14 կոպէկ։

496. Ուխտաւորն առաջին օրն անցաւ 25 վերստ, իսկ երկրորդ օրը 9 վերստ պակաս։ Նա էլի քանի վերստ պիտի անցնի, եթէ անցկացած ճանապարհը մնացած ճանապարհի կէսն է։

497. Աշակերտն առաջին օրը կարդաց 7 երես, իսկ երկրորդ օրը 6-ով աւելի։ Քանի երես է ամբողջ գիրքը, եթէ կարդացածը նրա հինգերորդ մասն է։

498. Գիւղացին 96 մանէթ փող ունէր. այդ փողի վեցերորդ մասով կով առաւ, քսանչորսերորդ մասով՝ ամանեղէն, իսկ ձիուն տուեց կովին և ամանեղէնին տուածից 3 անգամ աւելի։ Ի՞նչքան փող մնաց նրան։

499. Դարբինը երկու կտոր երկաթ ունէր։ Մի կտորին նա տուել էր 25 կոպէկ, իսկ միւսին՝ 18 կոպէկ աւելի։ Այդ բոլոր երկաթից նա շինեց 3 հատ բահ, որի հատը ծախեց 28 կոպէկով։ Նրան որքան աշխատավարձ մնաց։

500. Գիւղացին 4 օրավար ցորեն ցանեց՝ ամեն մի օրավարում 6 փութ։ Նա ստացաւ մէկուկէս-չորս։ Ստացած ցորենի կէսը պահեց իր համար, իսկ մնացածը ծախեց չեւվերտը 7 մանէթով։ Նա ի՞նչքան փող ստացաւ ծախած ցորենի համար։ (Մի չեւվերտը 8 փութ է)։

501. Կապալառուն մի ամբարում 16 չեւվերտ գարի ունէր, իսկ միւսում՝ 3 անգամ դրանից աւելի։ Առաջին ամբարից նա ծախեց չորրորդ իսկ երկրորդից՝ վեցերորդ մասը։ Էլի ի՞նչքան գարի մնաց նրան։

502. Մանրավաճառն առաւ մէկ ու կէս դիւժին բաժակ, դիւժինը 60 կոպէկով։ Ճանապարհին 5 բաժակ կոտրուեց. մնացած բաժակները մանրավաճառը ծախեց հատը 7 կոպէկով։ Ի՞նչքան փող աշխատեց նա։

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԱՄԱՀՈՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Տեսակ I

503. Մի ձկնորս 8 ձուկ բռնեց, իսկ միւսը՝ առաջինից 9-ով աւելի։ Քանի ձուկ բռնեց երկրորդ ձկնորսը։

504. Տանտիկինը 18 կոպէկ տուեց ալիւրի, երկու անգամ ալիւրից պակաս՝ իւղի և իւղից 5 անգամ աւելի մսի։ Մանէթից քանի կոպէկ յետ ստացաւ։

505. Մայրը 39 տարեկան է, հայրը 10 տարով մեծ է մօրից, իսկ որդին 7 անգամ փոքր է հօրից։ Քանի տարեկան է որդին։

506. Գիւղացին 14 փութ ցորեն ունէր և 6 անգամ դրանից աւելի գարի։ Գարու չորրորդ մասը նա ծախեց։ Էլի որքան գարի մնաց նրան։

507. Մի մրգավաճառ 18 սեխ ունէր. միւսը 5 անգամ նրանից աւելի, իսկ երրորդը երկրորդից 3 անգամ պակաս։ Քանի սեխ ունէր երրորդ մրգավաճառը։

508. Վաճառականն առաջին օրը ծախեց 24 մանէթի ապրանք, երկրորդ օրը՝ առաջին օրուանից 18 մանէթով աւելի, իսկ երրորդ օրը՝ առաջին և երկրորդ օրուանից 3 անգամ պակաս։ Ի՞նչքան փող ստացաւ նա երրորդ օրը։

509. Գիւղացին մի տեղ 8 փութ գետնախնձոր ցանեց, իսկ երկրորդ տեղը 6 փթով աւելի։ Առաջին տեղից նա ստացաւ ցանածից 4 անգամ աւելի, իսկ երկրորդից՝ 7 անգամ աւելի։ Նա ամեն մի հողից ի՞նչքան գետնախնձոր ստացաւ։

510. Կապալառուն 9 չեւվերտ գարի ցանեց, գարուց 3 անգամ աւելի ցորեն, ցորենից 11 չեւվերտով պակաս կորեկ, իսկ կորեկից 4 անգամ պակաս կտուաճառ։ Ամեն մի տեսակից նա քանի չեւվերտ ցանեց։

511. Գործարանատէրը 3 մարդուց բուրդ առաւ. առաջնից՝ 13 փութ, երկրորդից՝ 3 անգամ առաջնից ա-

ւելի, իսկ երրորդից՝ 18 փութ առաջնից և երկրորդից պակաս։ Նա քանի փութ բուրդ առաւ։

512. Մսավաճառը 13 ոչխար առաւ և 8-ով աւելի հորթ։ Ոչխարներին վճարեց 42 մանէթ, իսկ հորթերին 2 անգամ աւելի։ Ի՞նչ արժէ ամեն մի հորթը։

513. Կալուածատէրը 7 չեռվերտ գարի ցանեց և ստացաւ մէկին-6։ Ստացած գարուց 6 չեռվերտ ծախեց և ծախածից 2 անգամ աւելի սերմի համար պահեց։ Քանի չեռվերտ գարի մնաց նրան։

Տեսակ II

514. 25 արշին ժապաւէնն արժէ մի մանէթ։ Ի՞նչ արժէ նոյն ժապաւէնի 16, 19, 14, 15 արշինը։

515. Ճանապարհորդը 9 ժամում անցաւ 54 վերստ։ Քանի վերստ կ՚անցնի նա 7, 8, 12, 13, 14 ժամում։

516. Արհեստաւորն ստանում էր ամիսը 60 մանէթ։ Քանի մանէթ կ՚աշխատի նա 3, 5 շաբթում։

517. Վաճառականն 8 արշին չիթը ծախում է 96 կոպէկով։ Քանի կոպէկով կը ծախի նա 4, 5, 6 արշին չիթը։

518. 4 հիւսն 6 օրում ստանում էին 72 մանէթ։ Քանի մանէթ կը ստանան դրանցից 5-ը 3 օրում։

519. 8 մշակ մի առու փորեցին 10 օրում։ Այդպիսի մի առու քանի օրում կը քանդեն 16 մշակը։

520. 3 որմնադիր մի վառարան շինեցին 8 օրում։ Քանի որմնադիր 12 օրում մի վառարան կշինեն։

521. Պէտք է 72 թերթ թուղթ արտագրել։ Մի գրագիր այդ բոլորը կարող է արտագրել 12 օրում, միւսը՝ 9 օրում, իսկ երրորդը՝ 18 օրում։ Քանի օրում կ՚ արտագրեն նրանք այդ բոլորը, եթէ միասին աշխատեն։

522. 4 ձի 6 օրում ուտում են 96 գրվանքա խոտ։ Ի՞նչքան խոտ կ՚ուտեն 5 ձին 4 օրում։

523. 8 լապտերում 4 օրում այրուում է 64 գրվանքա նաւթ։ Քանի գրվանքա նաւթ կ՚այրուի 12 լապտերում 3 օրում։

524. 12 բանուորի 4 օրում տալիս են 96 գրվանքա հաց։ Քանի գրվ. հաց է հարկաւոր 5 օրում 8 բանուորի։

525. 13 հիւսն 7 օրուայ աշխատանքի համար ստանում են 91 մանէթ։ Քանի մանէթ կը ստանան 4 հիւսնը 5 օրուայ աշխատանքի համար։

526. 25 բանուոր մի ամիս կերակրելու համար հարկաւոր է 100 մանէթ. 8 բանուոր 3 ամիս կերակրելու համար քանի մանէթ ծախս կ՚երթայ։

Տեսակ III

527. Մանրավաճառը 8 տասնեակ կիտրոն առաւ և իւրաքանչիւր 5 հատին վճարեց 4 կոպէկ։ Ո՞րքան փող տուեց նա բոլոր կիտրոններին։

528. Պղնձագործը 72 գրվանքա պղինձ ունէր. այդ պղնձից նա կաթսաներ շինեց. քանի կաթսայ դուրս եկաւ, եթէ իւրաքանչիւր 5 կաթսայի համար գործ ածեց 18 գրվանքա պղինձ։

529. Չինուորներին մի օր կերակրելու համար հարկաւոր էր 2 և կէս փութ թխած հաց։ Քանի զինուոր կար այդտեղ, եթէ իւրաքանչիւր 12 զինուորին տալիս էին 20 գրվանքա հաց։

530. Պայտառն ունէր 64 պայտ։ Քանի ձի պայտեց նա այդ պայտերով, եթէ իւրաքանչիւր 6 ձիու համար գործ էր ածում 16 պայտ։

531. Մի տուն լուսաւորելու համար առան 9 գրվանքա չորսանոց մոմ։ Քանի գիշեր կը բաւականանայ մոմի այդ պաշարը, եթէ 5 գիշերում այրուում է 3 մոմ։

532. Խառնուրդի համար վաճառականը իւրաքանչիւր 7 գրվ. բարակ աղին վերցնում էր 9 գրվ. կոշտ աղ։ 63 գրվ. բարակ աղին նա քանի գրվ. կոշտ աղ խառնեց։

533. Աւազանը 90 վեդրօ ջուր է տանում։ Ո՞րքան ժամանակում կը դատարկուի այդ աւազանը, եթէ իւրաքանչիւր 5 րոպէում դուրս է թափւում 9 վեդրօ։

534. Գիւղացին փութ ու կէս ալիւր առաւ։ Ի՞նչքան թխած հաց դուրս կը գայ այդ ալիւրից, եթէ իւրաքանչիւր 15 գրվանքա ալիւրը տալիս է 20 գրվանքա թխած հաց։

Տեսակ IV.

535. Գիւղացին երկու ամբարում ունէր 95 չետվերտ գարի։ Ո՞րքան գարի կայ ամեն մի ամբարում, եթէ նրանցից մէկում 25 չետվերտով աւելի կայ միւսից։

536 Մի մարդ 100 մանէթով մի ձի ու մի կով առաւ։ Ի՞նչ արժէ ձին և կովը, եթէ ձին թանգ է կովից 34 մանէթով։

537. Եղբայրը և քոյրը միասին հաւաքեցին 87 հատ սունկ. եղբայրը քրոջից 19 հատ պակաս էր գտել։ Քանի՞ սունկ գտաւ նրանցից ամեն մէկը։

538. Երկու ատաղձագործ միասին վաստակեցին 75 մանէթ։ Այդ փողից որքան կը հասնի նրանցից ամեն մէկին, եթէ մէկը միւսից 19 մանէթի գործ աւելի էր շինել։

539. Այգում տնկած է 100 ծառ. տանձենիները 15-ով, իսկ խնձորենիները 25-ով աւելի էին սալորենիներից։ Ամեն մի տեսակից քանի՞ ծառ կար այգում։

540. Ձկնորսը բռնեց 62 ձուկ. իշխանը 9-ով աւելի էր գեղարքունուց, իսկ կողակը 14-ով աւելի իշխանից։ Ամեն մի տեսակից քանի՞ ձուկն էր բռնել ձկնորսը։

541. Մրգավաճառն ունէր 65 հատ խնձոր, տանձ և նարինջ. խնձորը 7-ով պակաս էր նարինջից, իսկ տանձը 13-ով աւելի խնձորից։ Քանի՞ տանձ, խնձոր և նարինջ ունէր նա առանձին-առանձին։

542. Հաւ ծախողը փողոց բերեց հաւեր, հնդուհաւեր, բադեր և սագեր՝ ընդամենը 100 հատ. հաւերի թիւը 6-ով աւելի էր բադերից, սագերի թիւը 9-ով աւելի հաւերից, իսկ հնդկահաւերի թիւը 11-ով պակաս էր բադերից։ Նա ամեն մի տեսակից քանի՞ հատ թռչուն էր բերել ծախելու։

543. Թռչնորսն 80 կոպէկով ծախեց 4 հատ աղաւնի և 8 հատ տատրակ։ Ի՞նչքանով ծախեց նա աղաւնիները և ի՞նչքանով տատրակները, եթէ իւրաքանչիւր աղաւնին 5 կոպէկով աւելի արժէ մի տատրակից։

544. 3 գրվ. կաղինի և 4 գրվ. շագանակի վճարեցին 68 կոպէկ։ Ի՞նչ արժէ մի գրվ. կաղինը և մի գրվ. շագանակը, եթէ կաղինը 4 կոպ.-թանգ է շագանակից։

Տեսակ V.

545. Վաճառականն առաւ 13 փութ շաքար՝ փութը 6 մանէթով, և այդ բոլոր շաքարը ծախեց 85 մանէթով։ Ո՞րքան աշխատեց վաճառականը։

546. Վաճառականը մի տոպրակ ալիւրն առնում էր 5 մանէթով, իսկ ինքը ծախում էր 7 մանէթով։ Ո՞րքան կաշխատի նա, եթէ ծախի 14 տոպրակ ալիւր։

547. Մանրավաճառը ծախեց 15 փութ ձէթ՝ փութը 5 մանէթով, և վնասուեց 12 մանէթ։ Ի՞նչքանով էր առել նա այդ ձէթը։

548. Զարչին առաւ 2 կով՝ հասը 18 մանէթով, և 5 ոչխար՝ հասը 8 մանէթով։ Կովերը նա ծախեց 40 մանէթով, իսկ ոչխարները 44 մանէթով։ Ի՞նչքան աշխատեց նա։

549. Գիւղացի կինը մի բադ ծախեց 90 կոպէկով և մէջն աշխատեց 15 կոպէկ։ Ի՞նչքանով էր առել նա այդ բադը, եթէ նրան կերակրելու համար ծախսել էր 5 կոպ.։

550. Վաճառականն ունէր 15 արշին թաւիշ, որի արշինը ծախեց 4 մանէթով և վնասուեց 30 մանէթ։ Ի՞նչքան արժէր իրան այդ թաւիշի արշինը։

551. Վաճառականը մահուդի արշինն առնում էր 6 մանէթով և ծախում 8 մանէթով։ Քանի արշին է մի թոփը, եթէ նրա վաճառումից աշխատեց 70 մանէթ։

552. Վաճառականն 8 գրվանքանոց արկղ թէյն առնում էր 24 մանէթով, իսկ ինքը ծախում 40 մանէթով։ Բոլոր թէյը ծախելուց յետոյ նա աշխատեց 64 մանէթ։ Քանի գրվանքա թէյ ծախեց վաճառականը։

554. Մանրավաճառը 5 նարինջն առնում էր 7 կոպէկով, իսկ ինքը գոյգը ծախում 3 կոպէկով։ Ի՞նչքան կաշխատի նա, եթէ 50 նարինջ ծախի։

554. Խանութպանը առաւ 48 հատ ծաղկանօթ և իւրաքանչիւր դիւժինին վճարեց 20 կոպէկ, իսկ ինքը ամեն մի կէս դիւժինը ծախեց 12 կոպէկով։ Ի՞նչքան աշխատեց նա բոլորը ծախելուց յետոյ։

555. Պղնձագործը իւրաքանչիւր 3 ինքնաեռն առնում էր 14 մանէթով, իսկ ինքը իւրաքանչիւր 4 հատը ծախում էր 25 մանէթով։ Ո՞րքան կաշխատի նա, եթէ ծախի 12 ինքնաեռ։

556. Վաճառականը փութը 6 մանէթով շաքար առաւ. այդ շաքարից 3 փութը թաց եղաւ և փչացաւ. մնացած շաքարի փութը նա ծախեց 8 մանէթով և աշխատեց 30 մանէթ։ Քանի փութ շաքար էր առել նա։

557. Մանրավաճառն առաւ 50 հատ կիտրոն՝ տասնեակը 15 կոպէկով։ Դրանցից 20 հատը փչացաւ և չը ծախուեց։ Ի՞նչքանով պիտի ծախի նա մնացածի հատը, որ մէջն աշխատի 15 կոպէկ։

Տեսակ VI.

558. Գիւղացին 84 մանէթի ցորեն ու գարի առաւ. ցորենի չեւերան արժէ 8 մանէթ, իսկ գարու չեւերանը՝ 6 մանէթ։ Քանի չեւերա ցորեն էր առել և քանի չեւերա գարի, եթէ առած ցորենը և գարին հաւասար էր։

559. Կապալառուն բանեցնում է 2 հաւասար խումբ

հիւսներ և աստղաձագործներ։ Նրանք բոլորը միասին օրական ստանում են 54 մանէթ։ Ամեն մի հիւսնը օրական ստանում է մի մանէթ, իսկ աստղաձագործը 2 մանէթ։ Քանի հիւսն և քանի աստղաձագործ էին բանում։

560. Դերձակը 96 մանէթով ծախեց հաւասար թուով բաճկոնակներ և վերարկուներ։ Նա քանի բաճկոն էր ծախել և քանի վերարկու, եթէ բաճկոնի հատն արժէր 14 մանէթ, իսկ վերարկուն՝ 18 մանէթ։

561. Արհեստաւորը ծախեց 3 տեսակ հաւասար քանակութեամբ դանակներ. մի տեսակի դիւժինը տուեց 3 մանէթով, միւս տեսակինը 5 մանէթով, իսկ երրորդ տեսակինը 4 մանէթով, և բոլորի համար ստացաւ 72 մանէթ։ Քանի դիւժին դանակ էր ծախել ամեն մի տեսակից։

562. Մի մարդ առաւ ցորենի և գարու ալիւր ու բոլորին տուեց մի մանէթ. ցորենի ալիւրի գրվանքան արժէր 7 կոպէկ, իսկ գարու ալիւրինը՝ 5 կոպ.։ Նա քանի գրվանքա էր առել մէկ և միւս տեսակ ալիւրից, եթէ ցորենի ալիւրը 4 գրվանքով աւելի էր գարու ալիւրից։

563։ Դերձակն առաւ սև և կապոյտ մահուդ և բոլորին վճարեց 87 մանէթ. սև մահուդի արշինն արժէր 4 մանէթ, իսկ կապոյտինը 5 մանէթ։ Նա քանի արշին էր առել մէկ և միւս տեսակ մահուդից, եթէ սևը 6 արշին աւելի էր կապոյտից։

Տեսակ VII

564. Երկու խումբ մշակներ միասին վաստակեցին 90 մանէթ. մի խմբում կար 7 մարդ, իսկ միւսում 8։ Ամեն մի խումբը ինչքան պիտի ստանար այդ փողից։

565. Երեք աշակերտ առան 4 դաստա թուղթ. նրբանոցից մէկը այդ բանի համար տուեց 8 կոպէկ, միւսը՝ 14 կոպէկ, իսկ երրորդը՝ 10 կոպէկ։ Ի՞նչքան թուղթ պիտի վերցնի ամեն մի աշակերտ։

566. Երեք բանուոր միասին վաստակեցին 8 մանէթ.

նրանցից մէկը բանել էր 4 օր, միւսը՝ 7 օր, իսկ երրորդը՝ 5 օր։ Ո՞րքան պիտի ստանայ ամեն մի բանուոր։

567. Երկու մարդ փող իջան և միասին առան 16 արշին մահուդ։ Քանի արշին մահուդ կ՚ընկնի ամեն մէկին, եթէ նրանցից մէկն իջել էր 24 ճնթ., իսկ միւսը 40 ճնթ։

568. Սայլապանը յանձն առաւ 20 մանէթով տեղափոխել 44 փութ ածուխ և 36 փութ երկաթ։ Ի՞նչքան վերցրեց նա ածուխի և ի՞նչքան երկաթի տեղափոխութեան համար։

569. Երկու քոյր միասին առան 14 կարկանդակ. դրա համար մէկը տուեց 18 կոպէկ, իսկ միւսը 6 կոպէկ աւելի։ Քանի կարկանդակ կ՚ընկնի ամեն մէկին։

570. Երկու վաճառական միասին առան 9 փութ իւղ. դրա համար մէկը տուեց 27 մանէթ, իսկ միւսը 27 մանէթ նրանից աւելի։ Քանի փութ իւղ վերցրեց ամեն մէկը։

571. Երեք գրագիր միասին վաստակեցին 22 մանէթ. մէկն աշխատում էր 4 օր՝ օրական 5 ժամ, միւսը երկու օր՝ օրական 6 ժամ, իսկ երրորդը 3 օր՝ օրական 4 ժամ։ Ամեն մէկը ի՞նչքան ստացաւ իր աշխատութեան համար։

572. Երկու մսավաճառ միասին առան 15 ոչխար. մէկը տուեց 25 մանէթ, իսկ միւսը 2 անգամ նրանից աւելի։ Քանի ոչխար կ՚ընկնի ամեն մէկին։

573. Երեք մանրավաճառ միասին 51 խնձոր ունէին։ Նրանք այդ խնձորները վաճառեցին միևնոյն գնով։ Նրանցից մէկը ծախեց 30 կոպէկի և իրեն էլի ճնաց 6 խնձոր. միւսը ծախեց 24 կոպէկի և իրեն էլի ճնաց 8 խնձոր. երրորդը ծախեց 45 կոպէկի և իրեն էլի ճնաց 4 խնձոր։ Նրանցից ամեն մէկը քանի խնձոր ունէր։

Տեսակ VIII

574. Հայրն իր որդիներին թողեց 100 մանէթ. Նրբանցից մէկն ստացաւ բոլոր փողի չորրորդ մասը, միւսը՝

հինգերորդ մասը, իսկ երրորդը՝ ճնացածը։ Ի՞նչքան փող ստացաւ երրորդ եղբայրը։

575. Կապալառուն 12 փութ բուրդ ծախեց՝ փութը 8 մանէթով։ Ստացած փողի վեցերորդ մասով առաւ կառք, իսկ ճնացածի չորս-հինգերորդական մասով՝ երկու հատ սար արժողութեան ձի։ Ի՞նչքան տուեց ամեն մի ձիուն։

576. Աստիճանաւորն ամսական 72 մանէթ ռոճիկ էր ստանում. այդ փողի երրորդ մասը նա տան քրէհ էր տալիս, ճնացածի երեք քառորդը ծախսում էր կերակրի վրայ, և ինչ որ ճնում էր, գործ էր ածում մանրածախսի համար։ Նա մանր քանի մանէթ էր ծախսում։

577. Խանութում երկու թոփ չիթ կար՝ իւրաքանչիւր թոփը 45 արշին։ Այդ չիթի երկու-հինգերորդ մասը վերցրեց դերձակը, ճնացածի երրորդ մասն առաւ մի գիւղացի, նոր ճնացորդի 3-քառորդը փոխեցին քաթանի հետ։ Քանի արշին ճնաց երկու կտորից։

578. Գտէք 52-ի երեք-քառորդը, աւելացրէք դրան 84-ի 2-եօթերորդականը և գտէք ստացած թուի իններորդ մասը։

579. 52-ի 3-քառորդից հանեցէք 36-ի 5-վեցերորդականը և աւելացրէք դրան 24-ի 3-ուրերորդականը։

580. Մի մարդ իր ունեցած փողի եօթերորդ մասը տուեց ժամացոյցի։ Ո՞րքան փող ունէր նա, եթէ ժամացոյցին տուեց 12 մանէթ։

581. Իմ ունեցած փողի վեց-ուրերորդ մասը 72 մանէթ է։ Ո՞րքան փող ունիմ ես։

582. Մի չեռվերիկ ցորենի երեք-հինգերորդ մասը քաշում է 27 գրվանքա։ Քանի գրվանքա է քաշում մէկ չեռվերիկ ցորենը։

583. Ճանապարհորդը առաջին օրն անցաւ ճանապարհի երեք-քառորդ մասը, իսկ երկրորդ օրը՝ առաջին օրուայ անցածի հինգերորդ մասը. էլի քանի վերստ է ճնում անցնելու, եթէ ամբողջ ճանապարհը 100 վերստ է։

584. Արհեստաւորը 20 գրվանքա պղինձ ունէր. այդ պղնձի երկու հինգերորդ մասից շինեց կաթսաներ, հինգերորդ մասից՝ թասեր, իսկ մնացածից շինեց երկու ինքնաեռ հաւասար քաշի։ Ո՞րքան էր քաշում մի ինքնաեռը։

Տեսակ IX

585. Երկու կողովում 52 խնձոր կայ։ Քանի խնձոր կայ ամեն մի կողովում, եթէ առաջին կողովի խնձորները 3 անգամ աւելի են երկրորդից։

486. Երկու մրգավաճառ միասին 92 գրվանքա սալոր ունէին։ Երբ որ առաջին մրգավաճառն իր ունեցածից ծախեց 20 գրվանքա, այդ ժամանակ երկրորդը 7 անգամ աւելի ունեցաւ առաջինից. քանի գրվանքա սալոր ունէր նրանցից ամեն մէկը։

587. Մի մարդ ստանում է ամսական 84 մանէթ. այդ փողի մի մասն ուղարկում է ծնողներին, երկու անգամ աւելի վճարում է բնակարանի և երեք անգամ աւելի գործ է ածում ուրիշ ծախսերի համար։ Ամսական նա քանի մանէթ է ծախսում։

588. Մի պարան, որի երկարութիւնը 72 արշին էր, երեք մաս արին. առաջինը 3 անգամ, իսկ երկրորդը չորս անգամ երկար էր երրորդ մասից։ Ի՞նչքան էր ամեն մի մասի երկարութիւնը։

589. Պարտիզում կայ 96 հատ տանձենի, խնձորենի և սալորենի։ Խնձորենին չորս անգամ աւելի է տանձենուց, իսկ տանձենին երեք անգամ աւելի սալորենուց։ Ամեն մի տեսակից քանի ծառ կայ պարտէզում։

590. Դերձակն առաւ 3 կտոր մահուդ՝ արշինը 3 մանէթով և բոլորին վճարեց 81 մանէթ. երկրորդ կտորը երկու անգամ աւելի էր առաջինից, իսկ երրորդը երեք անգամ աւելի երկրորդից։ Քանի արշին էր ամեն մի կտորը։

591. Հօր, մօր և որդու տարիները միասին վերցրած

96 է։ Մայրը հօրից 2 անգամ փոքր է, իսկ որդին 5 անգամ փոքր է մօրից։ Քանի տարեկան է ամեն մէկը։

592. Պղնձագործն ունէր երկուս ու կէս փութ պղինձ. այդ բոլոր պղնձից նա շինեց թասեր, ինքնաեռներ և կաթսաներ։ Թասերի համար գնաց չորս անգամ պակաս, իսկ ինքնաեռների համար 5 անգամ աւելի, քան կաթսաների համար։ Ի՞նչքան պղինձ գործածեց նա թասերի, ի՞նչքան ինքնաեռների և ի՞նչքան կաթսաների համար։

593. Երեք կառապան 96 փութ գարի առան և բաժանեցին այսպէս. երկրորդն ստացաւ առաջնից երկու անգամ պակաս, իսկ երրորդը երկրորդից երեք անգամ աւելի։ Քանի փութ գարի վերցրեց նրանցից ամեն մէկը։

Տեսակ X.

594. Տակառը տանում է 60 վեդրօ ջուր և ունի երկու խողովակ. առաջին խողովակից 1 րոպէում դուրս է թափւում 7 վեդրօ ջուր, իսկ երկրորդից՝ 8 վեդրօ։ Քանի րոպէում կը դատարկուի այդ տակառը, եթէ միաժամանակ բաց թողնենք երկու խողովակը։

595. Աւազանը տանում է 96 վեդրօ ջուր. նա ունի երկու խողովակ. առաջին խողովակից աւազանի մէջ 1 րոպէում թափւում է 10 վեդրօ ջուր, իսկ երկրորդ խողովակից 6 վեդրօ։ Քանի րոպէում կը լցուի այդ աւազանը, եթէ միաժամանակ բաց անենք երկու խողովակն էլ։

596. Աւազանը տանում է 68 վեդրօ ջուր և ունի երկու խողովակ. մի խողովակով աւազանից դուրս է թափւում 1 րոպէում 5 վեդրօ ջուր, իսկ միւս խողովակով 1 րոպէում ներս է թափւում 9 վեդրօ ջուր։ Քանի րոպէում կը լցուի այդ-աւազանը, եթէ բանալու լինինք երկու խողովակն էլ։

597. Մի աւազան, որ 100 վեդրօ ջուր է տանում, ունի երկու խողովակ. մի խողովակից 1 րոպէում ներս է

թափւում 12 վեդրօ, իսկ միւս խողովակով դուրս է թափւում 1 րոպէում 7 վեդրօ ջուր։ Աւազանում 8 րոպէից յետոյ ոչքան ջուր կը լինի և էլի քանի րոպէ պիտի բաց պահել երկու խողովակը, որ աւազանը լցուի։

598. 72 վեդրանոց տակառն ունի երկու խողովակ. մի խողովակով այդ տակառը լցւում է 8 րոպէում, իսկ երկրորդ խողովակից լիքը տակառը դատարկւում է 12 րոպէում։ Որքան ջուր կը լինի տակառում 14 րոպէից յետոյ, եթէ բանանք երկու խողովակն էլ։

599. Ջրամբարը 80 վեդրօ ջուր է տանում և երկու խողովակ ունի. առաջին խողովակով նա լցւում է 10 րոպէում, իսկ երկրորդ խողովակով բոլոր ջուրը դատարկւում է 20 րոպէում։ Քանի վեդրօ ջուր կը լինի այդ ամբարում, եթէ երկու խողովակն էլ բաց անենք 15 րոպէ։

Տեսակ XI.

600. Երկու ճանապարհորդ գնում էին իրար հանդէպ. մէկը մի ժամում անցնում էր 8 վերստ, միւսը 12 վերստ։ Քանի ժամից յետոյ կը հանդիպեն իրար, եթէ նրանց սկզբնական հեռաւորութիւնը 100 վերստ է։

601. Երկու քաղաք 98 վերստ իրարից հեռու են։ այդ քաղաքներից միաժամանակ դուրս եկան իրար հանդէպ երկու ճանապարհորդ. նրանցից մէկը մի ժամում անցնում էր 8 վերստ, միւսը 6 վերստ։ Քանի ժամից յետոյ նոքա կը հանդիպեն իրար, և հանդիպելու րոպէին նրանցից իւրաքանչիւրը քանի վերստ կը լինի անցկացած։

602. Գիւղից մինչև քաղաք 99 վերստ է. միաժամանակ և իրար հանդէպ դուրս եկան երկու սայլ։ Մի սայլը մի ժամում անցնում էր 4 վերստ, միւսը 5 վերստ։ Քանի ժամից յետոյ այդ սայլերը կը հանդիպեն իրար և հանդիպելուց յետոյ նրանցից ամեն մէկին էլի քանի վերստ կը մնայ անցնելու։

603. Երկու գիւղից իրար հանդէպ դուրս եկան երկու վաճառական։ Մէկը մի ժամում անցնում էր 7, միւսը 9 վերստ։ Վեց ժամից յետոյ նոքա իրար հանդիպեցին։ Որքան է այդ գիւղերի միջի տարածութիւնը և հանդիպելուց յետոյ էլի քանի վերստ է մնում նրանց անցնելու։

604. Երկու կայարանների միջի տարածութիւնը 96 վերստ է։ Այդ կայարաններից իրար հանդէպ դուրս եկան մարդատար և ապրանքատար գնացքներ։ Այդ տարածութիւնը ապրանքատար գնացքը կարող է անցնել 6 ժամում, իսկ մարդատար գնացքը երկու անգամ աւելի շուտ։ Քանի ժամից յետոյ կը հանդիպեն իրար այդ գնացքները։

605. Երկու մարդ իրար հանդէպ գտնուած տեղերից դուրս եկան առաւօտեան 8 ժամին։ Այդ տարածութիւնը մէկը կարող է անցնել 12 ժամում, միւսը 6 ժամում։ Նրանք ո՞ր ժամին իրար կը հանդիպեն, եթէ այդ տեղերի միջի տարածութիւնը 72 վերստ է։

Տեսակ XII

606. Վեց գրվանքա 3 կոպէկանոց ալիւրը խառնեցին 9 գրվանքա 8 կոպէկանոց ալիւրի հետ։ Խառնուրդի գրվանքան ի՞նչքան կ՚արժենայ։

607. 6 գրվանքա 10 մանէթանոց թէյի հետ խառնեցին 8 գրվանքա 3 մանէթանոց թէյ։ Ի՞նչքանով ծախեցին խառնուրդի գրվանքան, եթէ մէջը ոչ մնաս արին, ոչ էլ աշխատանք։

608. Մանրավաճառը խառնեց 4 գրվանքա 12 կոպէկանոց բրինձը 3 գրվանքա 11 կոպէկանոց բրնձի հետ։ Ի՞նչքանով պիտի ծախի խառնուրդի գրվանքան, որ մէջն աշխատի 17 կոպէկ։

609. Վերցրին 2 տեսակ ձէթից երեք-երեք գրվանքա և իրար հետ խառնեցին։ Խառնուրդի գրվանքան ի՞նչքան

կ՚արժենայ, եթէ մի տեսակ ձէթի գրվանքան արժէ 16 կոպէկ, իսկ միւս տեսակինը 4 կոպէկ պակաս։

610. Գինեվաճառը 5 վեդրօ 10 մանէթանոց գինին խառնեց 4 վեդրօ 8 մանէթանոց գինու հետ։ Այդ խառնուրդը ծախեց և մէջն աշխատեց 8 մանէթ։ Ի՞նչ արժէր խառնուրդի վեդրօն։

611. Մանրավաճառը 6 գրվանքա 13 կոպէկանոց ձէթը խառնելով 2 գրվանքա 11 կոպէկանոց ձէթի հետ, ծախեց ու 12 կոպէկ վնաս արաւ։ Նա ինչքանով ծախեց խառնուրդի գրվանքան։

612. 5 գրվանքա 12 կոպէկանոց շաքարաւազի հետ խառնեցին 3 գրվանքա 10 կոպէկանոց շաքարաւազ։ Բոլոր խառնուրդը ծախեցին և 2 կոպէկ վնաս արին։ Ի՞նչքանով ծախեցին խառնուրդի գրվանքան։

613. 8 գրվանքա առաջին տեսակի ալիւրը, որի գրվանքան արժէր 9 կոպէկ, խառնեցին 4 գրվ. երկրորդ տեսակ ալիւրի հետ։ Բոլոր խառնուրդը ծախեցին՝ գրվանքան 8 կոպէկով, և մէջը ոչ վնաս արին և ոչ աշխատանք։ Ո՞րքան արժէր երկրորդ տեսակ ալիւրի գրվանքան։

614. Վաճառականը խառնեց 7 գրվանքա մի տեսակի սիսեռ 6 գրվ., գրվանքան 8 կոպէկանոց, ուրիշ տեսակ սիսեռի հետ։ Բոլոր խառնուրդի գրվանքան ծախեց 7 կոպէկով և 8 կոպէկ աշխատեց։ Ի՞նչ արժէր առաջին տեսակ սիսեռի գրվանքան։

615. Երկու տեսակ ցորեն իրար հետ խառնեցին և խառնուրդը ծախեցին 77 մանէթով։ Խառնուրդի համար վերցրին 5 չեմվերտ առաջին տեսակ ցորենից, որի չեմվերտն արժէր 8 մանէթ, և մի քանի չեմվերտ երկրորդ տեսակից, որի չեմվերտն արժէր 5 մանէթ։ Ծախելուց յետոյ մէջն աշխատեցին 7 մանէթ։ Խառնուրդի համար երկրորդ տեսակ ցորենից քանի՞ չեմվերտ էին վերցրել։

616. Խանութում երեք գրվանքա մաքուր ձէթ կար, որի գրվանքան արժէր 20 կոպէկ. նրա հետ խառնեցին 4

գրվանքա կտուահատի ձէթ. բոլոր խառնուրդը ծախեցին գրվանքան 12 կոպէկով և մէջը վնաս արին 16 կոպ. Ի՞նչ արժէր կտուահատի ձէթի գրվանքան։

617. Գիւղացին 5 փութ լաւ տեսակի՝ փութը 12 մանէթանոց բրդի հետ խառնեց մի քանի փութ հասարակ՝ փութը 4 մանէթանոց բուրդ։ Այդ բոլոր խառնուրդը ծախեց 100 մանէթով և մէջն աշխատեց 28 մանէթ։ Նա քանի՞ փութ հասարակ բուրդ խառնեց։

618. Մանրավաճառը խառնեց իրար հետ գրվանքան 14 և 9 կոպէկանոց քիշմիշը և ստացաւ մի խառնուրդ, որի գրվանքան արժէր 10 կոպէկ։ Մի գրվանքա առաջին տեսակի քիշմիշի հետ քանի՞ գրվանքա երկրորդ տեսակի քիշմիշ պիտի խառնի, որ ոչ աշխատի և ոչ էլ վնաս անի։

619. Կալուածատէրը խառնեց իրար հետ չեմվերտը 12 և 7 մանէթանոց ցորեն և առանց վնասի ու աշխատանքի ծախեց չեմվերտը 9 մանէթով։ Երկրորդ տեսակ ցորենից քանի՞ չեմվերտ էր վերցրել նա, եթէ առաջին տեսակից խառնել էր 20 չեմվերտ։

620. Երկու տեսակ ալիւրուխարուց, որի մի տեսակի գրվանքան արժէր 12, իսկ միւս տեսակի գրվանքան 18 կոպ., 42 գրվանքա խառնուրդ կազմեցին, որի մի գրվանքան արժէր 14 կոպէկ։ Ամեն մի տեսակ ալիւրուխարուց քանի՞ գրվանքա է վերցրած խառնուրդի համար։

Տեսակ XIII

621. Մլինոյն գնով առաջին անգամ առան 10, իսկ երկրորդ անգամ 13 չեմվերտ ցորեն։ Երկրորդ անգամ 24 մանէթ աւելի վճարեցին, քան առաջին անգամ։ Ի՞նչքանով էին առնում ցորենի չեմվերտը։

622. Խանութում մլինոյն արժէքի երկու կտոր մահուդ առան. մի կտորը 23 արշին էր, իսկ միւսը 30։ Երկրորդ կտորին 21 մանէթ առաջինից աւելի վճարեցին։ Ի՞նչ արժէր մահուդի ամեն մի կտորը։

623. Մրգավաճառը մէկին ծախեց 78 կոպէկի նարինջ, իսկ միւսին՝ 96 կոպէկի։ Նրանցից ամեն մէկը քանի նարինջ էր առել, եթէ երկրորդը 3 հատ աւելի էր առել առաջինից։

624. Դերձակն առաջին անգամ առաւ 12 արշին սև և 8 արշին կապոյտ մահուդ և վճարեց 72 մանէթ. երկրորդ անգամ միևնոյն գնով նա առաւ 7 արշին սև և 8 արշին կապոյտ մահուդ և վճարեց 52 մանէթ։ Ի՞նչ արժէ սև և ինչ կապոյտ մահուդի արշինը։

625. Աւազանը երկու խողովակ ունի. եթէ առաջին խողովակը բաց անենք 4 րոպէ, իսկ երկրորդը 6 րոպէ, այն ժամանակ աւազանի մէջ կը լցուի 68 վեդրօ ջուր. իսկ եթէ բաց անենք առաջին խողովակը 4 րոպէ, իսկ երկրորդը 10 րոպէ, աւազանը կը լցուի 92 վեդրօ ջուր։ Ո՞րքան վեդրօ ջուր է թափւում իւրաքանչիւր խողովակից մի րոպէում։

Տեսակ XVI

626. Քանի ժամ կ՚անցնի առաւօտուայ 6-ից մինչև առաւօտուայ 9-ը, մինչև 12-ը, կէս օրուայ 2-ը։

627. Ո՞րքան ժամանակ կ՚անցնի առաւօտուայ 11 ժամից մինչև ցերեկուայ 3-ը, 4-ը, մինչև երեկոյեան 5, 6, 8, 9, 11 ժամը։

628. Այժմ ժամը քանիսն է, եթէ առաւօտուայ 5 ժամից անցել է 8, 12, 15 ժամ։

629. Ո՞ր ժամը կը լինի, եթէ երեկոյեան 7 ժամից անցնի 6, 9, 12, 8, 13 ժամ։

630. Գիւղից դուրս եկաւ մի գիւղացի և ամեն մի ժամում անցնում էր 8 վերստ. երկու ժամից յետոյ նրա յետևից դուրս եկաւ միւսը և մի ժամում գնում էր 10 վերստ։ Քանի ժամից յետոյ երկրորդ գիւղացին կը հասնի առաջինին։

631. Վաճառականը դուրս եկաւ քաղաքից առաւօտեան 7 ժամին և իւրաքանչիւր ժամում անցնում էր 5 վերստ. 4 ժամից յետոյ նրա յետևից դուրս եկաւ երկրորդ վաճառականը և ամեն մի ժամում գնում էր 7 վերստ։ Քանի ժամից յետոյ և ե՞րբ երկրորդ վաճառականը կը հասնի առաջինին։

632. Առաւօտեան 8 ժամին մի կայարանից դուրս եկաւ ապրանքատար գնացքը և իւրաքանչիւր ժամում գնում էր 18 վերստ։ Նոյն օրը կէսօրուայ 12 ժամին նոյն ճանապարհով դուրս եկաւ մարդատար գնացքը, որ մի ժամում անցնում էր 24 վերստ։ Քանի ժամից յետոյ և ե՞րբ մարդատար գնացքը կը հասնի ապրանքատար գնացքին։

633. Սուրհանդակը դուրս եկաւ գիւղից առաւօտեան 9 ժամին և մի ժամում անցնում էր 8 վերստ։ Նոյն օրը կէսօրուայ 12 ժամին դուրս եկաւ նոյն ճանապարհով նրա ետևից երկրորդ սուրհանդակը։ Երկրորդ սուրհանդակը իւրաքանչիւր ժամում քանի վերստ պիտի անցնի, որ 8 ժամից յետոյ հասնի առաջինին։

634. Մի սայլ ճանապարհ ընկաւ քաղաքից դէպի գիւղ և իւրաքանչիւր ժամում անցնում էր 4 վերստ։ Մի քանի ժամանակից յետոյ նրա ետևից դուրս եկաւ մի ուրիշ սայլ, որը մի ժամում 6 վերստ անցնելով՝ 10 ժամից յետոյ հասաւ առաջին սայլին։ Առաջին սայլի ճանապարհուելուց յետոյ քանի ժամ էր անցել, որ դուրս եկաւ երկրորդ սայլը։

635. Մի կայարանից առաւօտեան 11 ժամին դուրս եկաւ մի ճանապարհորդ և իւրաքանչիւր ժամում գնում էր 8 վերստ։ Կէսօրից 2 ժամ անց նոյն ճանապարհով գնաց երկրորդ ճանապարհորդը և գիշերուայ 10 ժամին հասաւ առաջինին։ Քանի վերստ էր անցնում մի ժամում երկրորդ ճանապարհորդը։

ԿՐԿՆՈՒԹԻՒՆ ԱՆՑԱԾԻ

636. Գիւղացին 4 չետ. ցորեն ցանեց և ստացաւ մէկին վեց։ Այդ ցորենի երրորդ մասը թողեց իր համար, մնացածի չորրորդ մասը սերմացու պահեց, իսկ ինչ որ մնաց, այն էլ ծախեց չետվերտը 8 մանէթով։ Ինչքա՞ն փող ստացաւ նա ծախած ցորենի համար։

637. Առաղձագործը 16 տախտակ առաւ և իւրաքանչիւր 4 տախտակին վճարեց 13 մանէթ։ Այդ տախտակներից նա 2 հատ պահարան և 8 հատ նստարան շինեց։ Ի՞նչքան աշխատավարձ կը մնայ նրան, եթէ իւրաքանչիւր պահարանը ծախի 27 մանէթով, իսկ իւրաքանչիւր նստարանը 3 մանէթով։

638. Ճանապարհորդը մի կայարանից դուրս եկաւ առաւօտեան 7 ժամին և իւրաքանչիւր ժամում գնում էր 8 վերստ. նա ո՛ր ժամին կը հասնի հետևեալ կայարանը, եթէ 3 ժամ ճանապարհին հանգստանայ (կայարանների միջի տարածութիւնը 56 վերստ է)։

639. Դերձակը 64 մանէթով ծախեց մի վերարկու, մի ժիլէտ և մի բաճկոն. վերարկուն 2 անգամ աւելի արժէր բաճկոնից, իսկ բաճկոնը 5 անգամ աւելի ժիլէտից։ Քա՞նի մանէթ արժէր վերարկուն, քա՞նի բաճկոնը և քա՞նի ժիլէտը։

640. Գիւղացին կալից վերցրեց 64 չետվերտ ցորեն և հաշուեց, որ հունձը եղել է մէկին-վեց. քա՞նի օրավար ցանքս ունէր նա, եթէ իւրաքանչիւր օրավարում ցանել էր 2 չետվերտ ցորեն։

641. Վաճառականը իւրաքանչիւր 3 թոփ չիթն առնում էր 12 մանէթով, իսկ ինքը 5 թոփը ծախում էր 25 մանէթով։ Ի՞նչքան կ՚աշխատի նա, եթէ ծախի 18 թոփ չիթ։

642. Փայտավաճառը 8 սաժէն փայտը առաւ 56 մա-

նէթով։ Ի՞նչ գնով պիտի ծախի նա այդ փայտը, որ աշխատի 16 մանէթ։

643. Գինեվաճառը իրար հետ օղի և ջուր խառնեց. նա վերցրեց 42 վեդրօ օղի և 14 անգամ դրանից պակաս ջուր։ Խառնուրդը քա՞նի վեդրօ դուրս եկաւ։

644. Վաճառականը իւրաքանչիւր 6 փութ սուրճն առնում էր 48 մանէթով, իսկ ինքը փութը ծախում էր 10 մանէթով։ Նա քա՞նի փութ սուրճ պիտի ծախի, որ մէջն աշխատի 52 մանէթ։

645. Երեք գրագիր մի հասին յանձն առան 62 մանէթով մի ձեռագիր արտագրել. նրանցից մէկը գրում էր 10 օր, միւսը առաջինից 3 օր պակաս, իսկ երրորդը երկու անգամ երկրորդից աւելի։ Նրանցից ամեն մէկը քա՞նի մանէթ պէտք է վերցնի իր աշխատութեան համար։

646. Երեք մարդ փող վեր եկան, և այդ փողի ութերորդ մասով առան մի խաղատոմս, որն արժէր 12 մանէթ. նրանցից ամեն մէկի մօտ ի՞նչքան փող մնաց, եթէ մէկի մօտ վեց մանէթ աւելի մնաց, քան մնացածներից իւրաքանչիւրի մօտ։

647. Ժանութում 60 արշին չիթ կար. մէկին ծախեցին այդ բոլոր չիթի կէսը, իսկ միւսին՝ մնացածի երկուերրորդ մասը. առաջին առնողը երկու մանէթ աւելի վճարեց, քան երկրորդը։ Ի՞նչ արժէր չիթի արշինը։

648. Ջրամբարը երեք խողովակ ունի. առաջին խողովակով մի րոպէում ներս է թափւում 8 վեդրօ ջուր, երկրորդով՝ 6 վեդրօ, իսկ երրորդով՝ 9 վեդրօ։ Քա՞նի վեդրօ ջուր կը լինի այդ ջրամբարում 3 րոպէից յետոյ, եթէ բանան բոլոր երեք խողովակները։

649. Փայտի պահեստում առաջին անգամ առան 5 սաժէն հացի փայտ և չորս սաժէն հաճարի փայտ, և բոլորին վճարեցին 64 մանէթ. երկրորդ անգամ նոյն գնով առան 7 սաժէն հացի փայտ, 4 սաժէն հաճարի փայտ, և

վճարեցին 80 մանէթ։ Ի՞նչ արժէ հացի և ի՞նչ հաճարի փայտի սաժէնը։

650. Մրգավաճառն ունի տանձ, խնձոր և ձմերուկ, ընդամենը 91 հատ. խնձորների թիւը 3 անգամ աւելի է տանձից, իսկ տանձի թիւը 3 անգամ աւելի է ձմերուկից։ Նա քանի խնձոր, տանձ և ձմերուկ ունի։

651. Կալուածատէրը 70 գլուխ ապրանք ունի. կովերի թիւը 4 անգամ և էլի 10-ով աւելի է ոչխարների թուից։ Նա քանի կով և քանի ոչխար ունի։

652. Երկու մրգավաճառ 90 ձմերուկ ունէին. նրանք հաւասար թուով ծախեցին և ապա մէկի մօտ մնաց 32, իսկ միւսի մօտ 28 հատ. ամեն մէկը քանի ձմերուկ ունէր։

653. Շունն ընկել է մի աղուէսի ետևից, որը նրանից 76 սաժէն հեռու է։ Շունը մի վայրկեանում վազում է 5 սաժէն, իսկ աղուէսը 3 սաժէն։ Քանի վայրկեանից յետոյ շունը կը հասնի աղուէսին։

654. Վաճառականը 6 գրվ. 3 մանէթանոց թէյը խառնեց 8 գրվ. 6 մանէթանոց թէյի հետ և խառնուրդի գրվանքան ծախեց 5 մանէթով։ Քանի մանէթ աշխատեց նա։

655. 80 վեդրօ ջուր տանող աւազանը երկու խողովակ ունի։ Մի խողովակից աւազանը դատարկւում է 8 ժամում, իսկ միւս խողովակից լցւում է 5 ժամում։ Ի՞նչքան ջուր կը մնայ աւազանում, եթէ 7 ժամ բանալու լինենք երկու խողովակն էլ։

656. Գործարանում բանում էին 25 տղամարդ և 18 կին և ստանում էին հաւասար վարձ. մի շաբաթ բանելուց յետոյ տղամարդիկ 21 ռ. աւելի ստացան կանացից։ Շաբաթը ի՞նչքան էին ստանում տղամարդիկ և ի՞նչքան կանայք։

657. Երկու տեսակ գինի խառնեցին իրար հետ. մի տեսակից վերցրին երկու չափ՝ չիշը 8 մանէթանոց, միւս տեսակից 8 չիշ։ Այդ խառնուրդը ծախեցին 56 մանէթով և մէջն աշխատեցին 8 մանէթ։ Ի՞նչ արժէր երկրորդ տեսակ գինու չիշը։

658. Ճանապարհորդը ոտով դուրս եկաւ քաղաքից առաւօտեան 8 ժամին և մի ժամում գնում էր 4 վերստ. նոյն օրը երեկոյեան 5 ժամին քաղաքից նոյն ուղղութեամբ դուրս եկաւ մի ձիաւոր, որ մի ժամում անցնում էր 6 վերստ։ Ո՞ր ժամին ձիաւորը կը հասնի ոտաւորին։

659. Մրգավաճառը ծախեց 5 կիտրոն և 9 նարինջ։ Ծախած կիտրոնները նրա ունեցած բոլոր կիտրոնների ութերորդ մասն էին կազմում, իսկ նարինջները բոլոր նարինջների հինգերորդ մասը։ Նա քանի նարինջ և քանի կիտրոն ունէր։

660. 6 արշին չիթն արժէ 78 կոպէկ, իսկ 4 արշին քաթանը 76 կոպէկ։ Ո՞րքան պէտք վճարել 4 արշին չիթին և 2 արշին քաթանին։

661. Երկու հնձուոր միասին հնձեցին 79 խուրձ. նրանցից մէկը 5 խուրձ աւելի հնձեց։ Քանի խուրձ հընձեց ամեն մի մշակ։

662. Տանտիկինը 89 կոպէկ ունէր. նա այդ փողով առաւ իւղ, բրինձ և աղ. աղին բրնձից 12 կոպէկ աւելի վճարեց, իսկ իւղին բրնձից 8 կոպէկ աւելի։ Նա քանի կոպէկ տուեց աղին, բրնձին և իւղին։

663. 3 ատաղձագործ շրջանակներ նորոգելու համար ստացան 54 մանէթ։ Ո՞րքան պէտք վերցնի այդ փողից ամեն մէկը, եթէ մէկը նորոգել է 6, միւսը 8, իսկ երրորդը 13 շրջանակ։

664. Ծառան ամսական 7 մանէթ էր ստանում։ Նա մի տարի և 2 ամիս ծառայելուց յետոյ ստացաւ 45 մանէթ փող, մի ձի և մի կով։ Ո՞րքան արժէ ձին և ո՞րքան կովը, եթէ ձին կովից 15 մանէթով թանգ էր։

665. Մի կին 68 արշին չիթ առաւ և այդ չիթից կարեց շապիկներ, շրջազգեստներ և գոգնոցներ. շապիկների,

համար 3 անգամ պակաս գործածեց, քան շրջազգեստների, իսկ գոգնոցների համար 4 անգամ պակաս քան շապիկների համար. նա որքան չիթ գործածեց շապիկների, որքան շրջազգեստների և որքան գոգնոցների համար։

666. Դերձակը 4 վերարկուն, որից ամեն մէկն արժէր 18 մանէթ, փոխեց մահուդի հետ, որի արշինն արժէր 6 մանէթ։ Քանի արշին մահուդ պիտի ստանայ դերձակը։

667. Մանրավաճառը 72 մանէթով առաւ 18 փութ բրինձ։ Բրնձի վեցերորդ մասը փչացաւ և չծախուեց։ Որքանով պիտի ծախի նա մնացած բրինձը, որ աշխատի 18 մանէթ։

668. Երկու ինքնաեռ միասին կշռում են 1 փութ 6 գրվանքա. դրանցից մէկը միւսից 8 գրվանքով ծանր է։ Որքան է ամեն մէկի քաշը։

669. Գիւղացին առաւօտեան 5 ժամին ճանապարհ ընկաւ դէպի քաղաք և իւրաքանչիւր ժամում գնում էր 4 վերստ։ Նա 10-ից մինչև 12 ժամը հանգստացաւ և յետոյ շարունակեց իր ճանապարհը՝ անցնելով իւրաքանչիւր ժամում 3 վերստ, և երեկոյեան 4 ժամին հասաւ քաղաք։ Քանի վերստ է գիւղից մինչև քաղաք։

670. Թէյավաճառն իրար հետ խառնեց երկու տեսակի թէյ և ծախեց 85 մանէթով։ Մի տեսակից նա վերցրեց 8 գրվ., որի գրվանքան արժէր 4 մանէթ, իսկ միւս տեսակից մի քանի գրվանքա՝ գրվանքան 2 մանէթանոց։ Խառնուրդի մէջ քանի գրվանքա կար երկրորդ տեսակ թէյից, եթէ այդ խառնուրդը ծախելուց աշխատեց 29 մանէթ։

671. 96 արշին երկարութիւն ունեցող առուն մի մշակ կարող է փորել երկու օրում, եթէ օրական աշխատի 6 ժամ. մի ուրիշ մշակ նոյն գործը կարող է վերջացնել 4 օրում, օրական 6 ժամ բանելով, իսկ երրորդը 6 օրում, եթէ օրական բանի 4 ժամ։ Ի՞նչքան ժամանակում կարող են վերջացնել այդ գործը 3 մշակը, եթէ նրանք աշխատելու լինեն միասին։

672. Երկու քաղաքների միջի տարածութիւնը 63 վերստ է։ Այդ քաղաքներից իրար հանդէպ դուրս եկան երկու սայլ։ Նրանցից մէկը մի ժամում անցնում էր 4 վերստ, միւսը 5 վերստ։ Քանի ժամից յետոյ կը հանդիպեն նրանք իրար և քանի վերստ կը լինի անցած նրանցից իւրաքանչիւրը մինչև միւսին հանդիպելը։

673. Առաւօտեան 6 ժամին քաղաքից ճանապարհ ընկաւ մի ուղևոր, որը ոտով իւրաքանչիւր ժամում անցնում էր 4 վերստ։ Նոյն օրը 11 ժամին նրա հետքով ճանապարհ ընկաւ մի ձիաւոր, որը մի ժամում անցնում էր 6 վերստ։ Որքան ժամանակից յետոյ և որ ժամին ձիաւորը կը հասնի ոտաւորին։

674. 23 գրվ. կտուաճառի սերմից դուրս է գալիս 6 գրվ. ձէթ։ Ի՞նչքան ձէթ դուրս կը գայ 2 չեռվերիկ սերմից, եթէ չեռվերիկը քաշում է 46 գրվանքա։

675. 16 մշակը երեք օրում ուտում են 96 գրվ. հաց։ Ի՞նչքան հաց կուտեն 14 մշակը 2 օրում։

676. 8 գրագիր մի գործ վերջացնում են 10 օրում։ Նոյն գործը քանի օրում կը վերջացնեն 5 գրագիրը։

777. Երեք աշակերտ փող իլան և միասին առան 4 դիւժին գրչածայր։ Քանի գրչածայր կընկնի նրանցից իւրաքանչիւրին, եթէ մէկը տուել է 7 կոպէկ, միւսը 8 կոպէկ, իսկ երրորդը 9 կոպէկ։

678. Կալուածատէրը իր արտերից ստացաւ 60 չետ. գարի։ Այդ գարու հինգերորդ մասը նա իր ձիերին ուտացրեց. ինչ որ մնաց, նրա երրորդ մասը ծախեց. մնացածի կէսը փոխեց խոտի հետ, իսկ միւս կէսը ցանեց և ստացաւ մէկին-4։ Ի՞նչքան գարի ժողովեց նա նոր հնձից։

679. Վաճառականն իր պարտքը վճարելու համար առաջարկում է կամ արշինը 4 մանէթանոց մի քանի արշին մահուդ և 46 մանէթ փող, և կամ 9 մանէթանոց

նոյնքան արշին թաւիշ և 6 մանէթ փող: Ո՞րքան էր նրա պարտքը:

680. Ջրամբարը տանում է 100 վեդրօ ջուր: Ո՞րքան ժամանակում կը դատարկուի ամբողջ ջրամբարը, եթէ մի խողովակից մի րոպէում դուրս թափուի 12 վեդրօ ջուր, իսկ միւս խողովակից նոյնքան ժամանակում ներս թափուի 7 վեդրօ:

681. Ուսումնարանի 3 դասարանում սովորում են 92 աշակերտ: Առաջին դասարանում 15 աշակերտ աւելի է երկրորդից, իսկ երկրորդում 3 անգամ աւելի երրորդից: Քանի աշակերտ կայ իւրաքանչիւր դասարանում:

682. 64 մանէթով առան 18 արշին բրդի և 7 արշին մետաքսի կտոր. երկրորդ անգամ նոյն գներով առան 18 արշին բրդի և 15 արշին մետաքսի կտոր և վճարեցին 96 մանէթ: Ի՞նչքան արժէ մի արշին բրդի և ինչքան մի արշին մետաքսի կտորը:

683. Մանրավաճառը խառնեց իրար հետ 2 տեսակ ընկոյզ. մէկի գրվանքան արժէր 10 կոպէկ, իսկ միւսինը 16 կոպէկ: Այդ բոլոր խառնուրդի գրվանքան 12 կոպէկով ծախեց և իր փողը հանեց: Խառնուրդի համար քանի գրվանքա էր վերցրել մէկ և միւս տեսակ ընկոյզից, եթէ ամբողջ խառնուրդը 24 գրվանքա էր:

684. Գինեվաճառը խառնեց իրար հետ 2 տեսակ գինի: Մի տեսակի վեդրօն արժէր 9 մանէթ, իսկ միւս տեսակինը 4 մանէթ:Ստացուեց վեդրօն 6 մանէթանոց խառնուրդ: Ո՞րքան էր ամբողջ խառնուրդը, եթէ առաջին տեսակ գինուց 14 վեդրօ էր:

685. Մի թոփ մահուդը 58 արշին էր: Այդ մահուդից 24 արշինը ծախեցին՝ իւրաքանչիւր 3 արշինը 5 մանէթով, 32 արշինը՝ իւրաքանչիւր 8 արշինը 9 մանէթով, իսկ մնացածի արշինը տուին 3 մանէթով: Ո՞րքան վաստակեցին այդ մահուդի թոփի մէջ, եթէ իրենք վճարել էին 65 մանէթ:

686. Խանութպանը 5 վարունգն առնում էր 6 կոպէկով, իսկ ինքը 12 հատը ծախում 18 կոպէկով: Ո՞րքան կաշխատի խանութպանը, եթէ ծախի 60 վարունգ:

687. Վաճառականը մէկի վրայ ծախեց 96 կոպէկի չիթ, իսկ միւսի վրայ 36 կոպէկի: Ո՞րքան արժէր չիթի արշինը և քանի արշին ծախեց ամեն մէկի վրայ, եթէ առաջինը երկրորդից 5 արշին աւելի առաւ:

688. 8 բանուոր 5 ժամում գործեցին 80 արշին չիթ: Քանի արշին չիթ կը գործեն 12 բանուորը 3 ժամում:

689. Երեխան երկու քսակի մէջ մի մանէթ ունէր: Երբ նա երկու քսակից հաւասարապէս վերցրեց, այն ժամանակ մէկում մնաց 38, իսկ միւսում 36 կոպէկ: Ո՞րքան փող կար իւրաքանչիւր քսակում:

690. Խանութում մի արշին քաթանը ծախում էին 12 կոպէկով, իսկ իրենք առել էին 9 կոպէկով: Քանի արշին քաթան են ծախել այնտեղ, եթէ բոլորի մէջ աշխատել են 75 կոպէկ:

691. Երեք մանրավաճառ միասին ունէին 5 դիւժին մատիտ: Այդ մատիտները նրանք ծախում էին միևնոյն գնով: Երբ նրանցից մէկը ծախեց 32 կոպէկի, միւսը 24 կոպէկի, իսկ երրորդը 36 կոպէկի, այն ժամանակ մէկի մօտ մնաց 15 մատիտ, միւսի մօտ 8, իսկ երրորդի մօտ 14: Քանի մատիտ ունէր ամեն մի մանրավաճառ:

692. Երկու մրգավաճառ իրենց մրգերը փոխեցին. մէկը տուեց 18 խնձոր, որի տասնեակն արժէր 40 կոպէկ, իսկ միւսը դրա փոխարէն տուեց մի քանի կիտրոն, որի հատն արժէր 6 կոպէկ: Խնձորների փոխարէն նա քանի կիտրոն պիտի տայ:

693. Մի մարդ աղքատներին բաժանեց 91 կոպէկ. ամեն մի տղամարդու նա տուեց 8 կոպէկ, իսկ ամեն մի կնոջ 5 կոպէկ: Քանի աղքատ էին և նրանցից քանիսն էր տղամարդ և քանիսը կին:

694. 3 արկղ լապտերները բերին խանութ. ամեն մի

